**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ՍԵՎՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԴՊՐՈՑԻ**

# Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

# ԼՐԱՄՇԱԿՎԱԾ



Նախագծող՝ «ՄԱՌԱ ԵՎ ԴՈՒՍՏՐԵՐ» ՍՊԸ

Տնօրեն Մ. Հունյան

Կապալառու կազմակերպություն՝ **«ԽԱՉՄԻՇԻՆ» ՍՊԸ**

Տնօրեն՝ Խ. Համզյան

Հաշվետվության կազմման խորհրդատու՝ Լ. Մելիքյան

**1. Ընդհանուր տեղեկատվություն.** 3
2. Հավելվածներ 4
**3. Հապավումներ.** 4
**4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կազմման իրավական հիմքերը** 5
5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փործաքննական գործընթացների վերաբերյալ 9
6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը 10
7.ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը 10
8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 10
8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր 10
8.1.1. Կլիմա և օդային ավազան 15
8.1.2. Հողային ռեսուրսներ. 20
8.1.3.Ջրային ռեսուրսներ 21
8.1.4. Կենսաբազմազություն 21
8.1.5. Հատուկ պահպանվող տարածքներ 60
8.1.6. Պատմության և մշակութային հուշարձաններ: 60
8.1.7. Բնության հուշարձաններ 62
8.1.8. Սոցիալ-տնտեսական բնութագիրը 64
9. Շինարարության ընթացքում իրականացվող գործունեություն նպատակը, բնութագիրը և տեխնիկականտեխնոլոգիական լուծումները 66
9.1. Քանդման փուլ 66
9.2 Շինարարության փուլ 66
9.2.1 Շինարարության իրականացման ժամանակացույցը 70
10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր 70
10.1 Ջուր. 71
11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը 77
11.1 Օդային ավազան. 78
11.2 Հողային ռեսուրսներ 79
11.3 Ջրային ռեսուրսներ 80
11.4 Կենսաբազմազանություն. 81
11.5 Թափոններ. 81

11.6 Աղմուկ և թրթռում. .... 83
11.7 Արտակարգ իրավիճակներ. .... 84
11. 8 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. .... 86
11.9 էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն .... 88
11.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. .... 90
11.11 Սոցիալական. .... 90
11.12 Լանդշաֆտ. .... 90
11.13 Բարեկարգում և Կանաչապատում .... 91
12. Մոնիթորինգ .... 91
13. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան .... 93
14. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ .... 97
15.Բողոքների ընթացակարգ .... 100
**Գրականություն** .... 100
Հավելված 1, Տեղեկանք գրունտի հեռացման .... 102
Հավելված 3, Արձանագրություն և մասնակիցների ցանկ .... 105
Հավելված 4 Գլխավոր հատակագիծ և կանաչապատման սխեմա .... 108
Հավելված 5 Շինաշխատանքների կազմակերպման սխեմա .... 109
Հավելված 6 Իրադրության հատակագիծ .... 111
Հավելված 7 Սեփականության վկայական .... 113
Հավելված 8 Ճարտարապետահատակագծային առաջադրանք .... 115
Հավելված 9 վճարման հանձնարարականը .... 119
Հավելված 10 «Առավոտ» թերթը առ 11.12.2024թ. .... 120
Հավելված 11 Գազամատակարարման տեխնիկական պայման .... 121
Հավելված 12 Ջրամատակարարման տեխնիկական պայման .... 125
Հավելված 13 Էլեկտրատեղակայանքների տեղափոխման տեխնիկական պայման .... 126

## 1. Ընդհանուր տեղեկատվություն.

| | |
|---|---|
| Ծրագրի անվանում | «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող, կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված ՀՀ Տավուշի մարզի Սևքարում գտնվող 432 աշակերտական տեղով դպրոցի կառուցում |
| Պատվիրատու | Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ |
| Նախագծող | «Մառա և դուստրեր» ՍՊԸ |
| Նախագծող իրավաբանական հասցեն | Երևան, Փ. Բուզանդի փող.,1/3 |
| Փաստացի գործունեության տարածք | Ք. Երևան, Քոչարյան փ.16շ. բն.1 |
| Ձեռնարկողի հեռախոս և էլեկտրոնային հասցե | (+374-93) 740 411, maraevdustrer@gmail.com |
| Կապալառու ընկերություն | **«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ** |
| Հաշվետվության կազմման խորհրդատու | Լ. Մելիքյան |

## 2. Հավելվածներ

Հավելված 1 Տեղեկանք շինաղբի հեռացման
Հավելված 2 Ավագանու որոշում
Հավելված 3 Արձանագրություն և մասնակիցների ցանկ
Հավելված 4.Շինհրապարակի գլխավոր հատակագիծ և կանաչապատման սխեմա
Հավելված 5 Շին. Աշխատանքների կազմակերպման սխեմա
Հավելված 6 Իրադրության հատակակագիծ
Հավելված 7 Սեփականության վկայական
Հավելված 8 Ճարտարապետահատակագծային առաջադրանք
Հավելված 9 Վճարման հանձնարարականը
Հավելված 10 «Առավոտ» օրաթերթ առ 20.01.2025թ
Հավելված 11 Գազամատակարարման տեխնիկական պայման
Հավելված 12 Ջրամատակարարման տեխնիկական պայման
Հավելված 13 Էլեկտրատեղակայանքների տեղափոխման տեխնիկական պայման

## 3. Հապավումներ.

ՇՄԱԳ-Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՀՏԶՀ- Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
ՀՀՇՆ-Հայաստանի Հանրապետության Շինարարական Կլիմայաբանություն
ՇՄՆ-Շրջակա միջավայրի նախարարություն

## 4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կազմման իրավական հիմքերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.-ի ՀՕ-110 ՀՀ Օրենքում՝ 2023թ. մայիսի 3-ի փոփոխություններ կատարելու մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ սահմանված դրույթներին համապատասխան: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները: Բոլոր նախատեսվող գործունեությունները, որոնք կարող են ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք («Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված 5 2022թ.)- կարգավորում է մթնլորոտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ. ) - Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ. ) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական

աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, 6 կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) -Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսվարման տարբեր կազմակերպաիրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004 թ.)- կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և

շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

«ՀՀ ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենք / Ընդունված է 2001 թվականի մարտի 7-ին/ Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, սույն օրենքին համապատասխան էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

## ՀՀ կառավարության որոշումներ

- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»
- ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 20.07.2006.N 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 31.07.2014թ. N781-Ն որոշում «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին»
- ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշում «Բնակավայրերի կանաչ գոտիների չափերին և տեսակային կազմին ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 30.10.2008 թ. N1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»
- ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թ. «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 Թվականի Նոյեմբերի 19-Ի N 1325-Ն Որոշման Մեջ Փոփոխություն Կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:
- ՀՀ կառավարության 8 հոկտեմբերի 2009 թվականի «Կենտրոնացված կոյուղացանց չունեցող համայնքներում նոր կառուցվող օբյեկտների համար կոյուղաջրերի տեղային մաքրման կայանների պարտադիր տեղադրման նորմերը հաստատելու մասին» N 1142-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 394-Ն որոշում (փոփ. 21 մարտի 2024 թվականի):

Սույն հաշվետվության պատրաստման ընթացքում հաշվի են առնվել Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող, կամ վերակառուցվող 300 դպրոցներ»-ի ծրագրում ընդգրկված դպրոցների ցանկը հաստատելու և ցանկում ընդգրկված դպրոցների համար սահմանված շինարարական աշխատանքների՝ կառուցման, վերակառուցման, կամ հիմնանորոգման համար միջամտության աստիճանի ընտրության չափորոշիչները սահմանելու մասին» 30 նոյեմբերի 2023 թվականի N 2093-Ն որոշման մասին օրենքը, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացրած բնապահպանական միջազգային պայմանագրերի պահանջները, ինչպես նաև Հայաստանը վավերացրել է մի շարք միջազգային համաձայնագրեր (բերված են ստորև) և կոնվենցիաներ՝ կապված շրջակա միջավայրի կառավարման խնդիրների հետ (ցանկն առկա է ՀՀ ՇՄՆ http://www.mnp.am/ ինտերնետային էջում)։

**Միջազգային համաձայնագրեր**

- «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
- Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
- ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
- «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-Ժանեյրո)
- «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (2003թ.վավերացվել է ՀՀ կառավարության կողմից)
- «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել)։ Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար։

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13,14,15,16, Գլուխ 6)։

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 “Շինարարությունում նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին” N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014)։

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից։ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013)

պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Համաձայն Օրենքի՝ գործունեությունները դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա, և Բ: Ըստ Օրենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ$^2$-ը (դպրոցի նոր կառուցվող մասնաշենքի կառուցապատման մակերեսը կազմում է 3798,1մ$^2$, տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 0,77619հա, կառուցվող դպրոցի օգտագործվող հողամասի մակերեսը 7761.9քմ է, որից կանաչապատման մակերեսը կազմում է 2106,0մ$^2$, դպրոցի ընդհանուր մակերեսը կազմում է 6913,8մ$^2$

Համաձայն Օրենքի լիազոր մարմինը՝ շրջակա միջավայրի նախարարությունը իրականացում է հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության փորձաքննություն, տրամադրում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

Սույն Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Սև Քար բնակավայրի դպրոցի կառուցման համար, որի նախագծային տեղակապումն իրականացվել է «Մառա և դուստրեր» ՍՊ ընկերության կողմից:

Դպրոցի կառուցումն իրականացվելու է ՀՀ պետական բյուջետային միջոցների հաշվին՝ պետական կարիքների համար:

## 5. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

**Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակը**

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունները (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութեր, թափոններ և այլ գործոններ), վերլուծել ու գնահատել դրանք, ցույց տալ, որ հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման, չեզոքացման և/կամ նվազեցման համար նախատեսված են անհրաժեշտ միջոցառումները: Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները:

Ըստ "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" օրենքի փորձաքննության ենթակա են օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ, 6-9-րդ մասերով, ինչպես նաև օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված՝ նախատեսվող գործունեության տեսակների ՇՄԱԳ հաշվետվությունները և նախագծային փաստաթղթերը: Իրադրային սխեման նայել հավելված 6-ում:

## 6. Ձեռնարկողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

Նախատեսվող գործունեության տեղակայման նախագծումն իրականացվելու է «Մառա և դուստրեր» ՍՊԸ կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Փ. Բուզանդի փող., 1/3:

Սև Քար բնակավայրի դպրոցի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Տավուշի մարզի Սև Քար բնակավայրում՝ «մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող, կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում, ՀՀ կառավարության 394-Ն որոշման համաձայն: Նախատեսվող գործունեության նպատակն է՝ կառուցել համապատասխան ստանդարտներով և ժամանակակից պահանջներով դպրոցի նոր շենք: Ծրագրի իրականացնող է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը (ՀՏԶՀ)՝ ՀՀ կառավարության պետական բյուջեի միջոցներով: Կապալառու ընկերությունն է **«ԽԱՉՄԻՇՇԻՆ» ՍՊԸ**:

## 7.ՇՄԱԳ հաշվետվության մշակման հիմքերը

Նախատեսվող դպրոցի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

- դպրոցի կառուցման նախագծային փաստաթղթերը,
- դպրոցի կառուցման գլխավոր հատակագիծը
- տեղամասի ինժեներաերկրաբանական հետազոտությունների հաշվետվությունը,
- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները, ՏԻՄ որոշումը,

## 8. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

### 8.1 Նախատեսվող գործունեության համառոտ նկարագիր

Նոր կառուցվող դպրոցի համար տրամադրվել է նոր տարածք՝ 0,77619 հա, որը կից է գոյություն ունեցող դպրոցի տարածքին: Տարածքն ապահովված է կադաստրային փաստաթղթերով: Դպրոցը նախատեսված է 432 տեղ դպրոցականների համար:

Գոյություն ունեցող դպրոցի տարածք 1.87923հա է, իսկ գործող դպրոցի մասնաշենքերը ենթակա չեն քանդման: Տարածքում կան մանր թփեր, բուսականություն է՝ մոլախոտի տեսքով: Կից գտնվում են՝ ներհամայնքային նշանակության ճանապարհ, կից տարածքներով անցնող ինժեներական գծեր: Հարևանությամբ գտնվում են բնակելի տներ, հողամասեր և այլ տարածքներ:

Գործունեության տարածքում բացակայում են բնության հատուկ պահպանվող տարածքները, պատմամշակութային հուշարձանները:

Նոր իրականացվող դպրոցի ընդհանուր տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել:



*Նկար 1 Նախապեսվող կրթահամալիր*

Դպրոցը երկհարկանի է, առկա է նկուղային հարկ, որը ծառայում է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Շենքի ծավալում նախատեսվում է ունենալ 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար: Առաջին հարկում տեղակայված են 1-ից մինչև 5-րդ դասարանի 2-ական լսարանները, նախադպրոցական դասարանը, գրադարանն ու համակարգչային տեխնիկայի կաբինետը, ռազմագիտության կաբինետը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակները իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման կաբինետը, բժշկի սենյակը, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, սպորտդահլիճը՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարանը և խոհանոցը, ինչպես նաև թվով երեք սանհանգույցներ, ինչպես նաև այլ օժանդակ սենյակներ ու տարածքներ: Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից տեղակայված են հաշմանդամների համար նախատեսված ուղղահայաց ամբարձիչը, ծնողների սպասասրահը, ինչպես նաև 2-րդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն: 2-րդ հարկում առկա են նաև պատշգամբներ: Տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանի լսարանները, 2 լեզվի կաբինետ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետը, ռեսուրսային կենտրոնը, ուսուցչանոց-մեթոդկաբինետը, կենսաբանության և քիմիայի մասնագիտացված լսարանը՝ իրեն կից լաբորատորիայով, ֆիզիկայի մասնագիտացված լսարանը՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճը իրեն սպասարկող սենյակների խմբով, թվով 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ ու տարածքներ: Դպրոցն ունի 36,6x91,5մ առանցքային չափեր և սեյսմիկ կարով

բաժանված է 2 հավասար մասնաշենքերի: Միջնորմները նախատեսված են 200x400x200 թեթև բետոնե բլոկներից, համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3,5մ՝ որոշ տեղամասերի լայնացումներով: Դասասենյակներն ունեն 7x7մ առանցքային չափեր, իսկ դրանց միջին մակերեսը կազմում է 48մ$^2$: Առաջին հարկի բարձրությունը հատակից հատակ կազմում է 3,3մ: 2-րդ հարկի բարձրությունը փոփոխական է, ստորին մասում կազմում է 3,0մ ծածկի տակ: Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 4,5մ: Ջրահեռացումները նախատեսվում է իրականացնել կազմակերպված: Տանիքների թեքությունը կազմում է 7 աստիճան, երկշերտ ջրամեկուսիչով, վերին շերտը պաշտպանիչ մանրավազով, գույնը մուգ մոխրագույն: Տանիքին նախատեսվում է տեղադրել արևային մարտկոցներ: Կառույցի արտաքին պատերն իրենցից ներկայացնում են 20սմ ե/բ կոշտություններ, արտաքին 10սմ ջերմամեկուսիչ շերտ և 30մմ հաստության տրավերտինե երեսապատում՝ ց/ա շաղախով, ամրանային ցանցի վրա:

Շինության ներքին սենքերը համաձայն նախագծի հարդարվում են գաջե սվաղով և ներկվում լատեքսային ներկով RAL 9010 երանգի:

Նկուղային հարկի, սանհանգույցների, խոհանոցային սենքերի և տեխնիկական այլ սենքերի պատերը ենթակա են ց/ա սվաղման՝ հետագա ներկումով, կամ սալիկապատմամբ: Պատշգամբների ստորին հատվածում իրականացվող կախովի առաստաղները ֆիբրոբետոնից են, իսկ ներքին սենքերում և առաստաղներում կիրառված գիպսաստվարաթուղթը ջրակայուն է, 12,5մմ հաստության: Հատակների հարդարման մեջ կիրառված են կերամոգրանիտ, վինիլ և սպորտային վինիլ: Բոլոր ճաղերը մետաղական են, ենթակա են երկտակ ներկման մետաղական հակակոռոզիոն ներկով RAL 7016 երանգի: "Ա" առանցքով պատի շրջանաձև բացվածքների հաստությունը իրականացվում է ց/ա սվաղով և տրավերտինե երանգի ֆասադային ներկով: Կենտրոնական մուտքի աջ կողմում նախատեսված է ցայտաղբյուր: Արտաքին պատուհանների և դռների պրոֆիլները նախատեսված են ալյումինե՝ ջերմային կամրջակով, ապակեփաթեթի ներքին շերտը էներգախնայող: Ներքին վիտրաժները ալյումինե շրջանակներով՝ առանց ջերմային կամրջակի: Երդիկների ապակիները 1 շերտը թրծված ապակուց են, ներքին շերտը տրիպլեքս, համալրված օդափոխության համակարգով՝ ջերմոցային էֆեկտը կանխելու նպատակով:

Գլխավոր հատակագծում դպրոցի ամբողջ տարածքը բարեկարգված է:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանցի մեջ և համաձայն տեխնիկական պայմանների թափվում են օբյեկտում նախատեսված կոյուղու մաքրման կայանի (FBR-15 տիպի) մեջ: Մաքրելուց և վարակազերծելուց հետո հոսքերը հեռացվում են կուտակիչ հորի մեջ, որից հետո թափվում են համայնքի հետ համաձայնեցված վայրեր:

Նախագիծը մշակված է համաձայն ՀՀՇՆ 30-01-2023 Քաղաքաշինություն քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում ՀՀՇՆ 21-

01-2014 Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն նորմերին համապատասխան՝ Հայնախագիծ ԲԲԸ-ի կողմից, «Մառա և Դուստրեր» ընկերությունը իրականացնում է տեղակապում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից մշակվել է համապատասխան բարեկարգման, կանաչապատման նախագիծ:

Գործունեությունն իրականացվում է «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցներ» ծրագրի շրջանակներում, կառուցվելու է 432 աշակերտական տեղով դպրոց: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

**Դպրոցի կառուցման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.**

- Դպրոցի հզորությունը (տարողությունը) աշակերտ՝ մինչև 432;
- Հողամասի ընդհանուր մակերեսը՝ 7761.9 քմ
- Կառուցապատման մակերեսը՝ 3798.1քմ;
- Կառուցապատման տոկոսը 49,0%
- Շենքի ընդհանուր մակերեսը քմ 6913,8 քմ

  դպրոցի նկուղային հարկի մակերեսը 1628,1քմ;
- Կանաչապատման մակերեսը 2106.0քմ;
- Կանաչապատման տոկոսը 27,1%;
- Մաքրման կայանի հզորությունը 15մ$^3$/օր;

Հետազոտվող տարածքը գտնվում է ՀՀ Տավուշի մարզի, Իջևան համայնքի Սևքար բնակավայրում:

**Ըստ սեյսմիկ հատկության**՝ ՀՀՇՆ 20.04-2020թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ գոտում՝ գրունտների Amax= 0.3g արագացմամբ:

**Ինժեներա-երկրաբանական ուսումնասիրություններ**

2025թ. ապրիլ ամսին «ԳԵՈԶՈՆ» ՍՊԸ-ի կողմից կատարվել են նախատեսվող գործունեության տարածքի ինժեներա-երկրաբանական ուսումնասիրությունների գնահատման աշխատանքներ:

**Հիդրոերկրաբանական տեսակետից** հետազննվող հարթակում փորված հորատանցքերով գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Գրունտային ջրերը գտնվում են

ավելի խորը հորիզոններում կամ դուրս են գալիս մոտակա ձորակների թեք լանջերից աղբյուրների տեսքով:

**Ֆիզիկաերկրաբանական** վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

**Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը.**

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝ Լիցքերը ներկայացված կավերով, բուսական շերտը՝ ներկայացված բույսերով և արմատների մնացորդներով, ավազակավով և կավե գրունտները:

Տարածքում հորատված հորատանցքերի հիման վրա պարզ է դարձել երկրաբանալիթոլոգիական կտրվածքները:

Տեղամասի երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում են հետևյալ 3 շերտերը կամ ինժեներաերկրաբանական տարրերը՝ վերևից ներքև.

**Շերտ-1**

Լիցք (կավ՝ կիսապինդ մածուցիկության, թեթև փոշային):

Շերտի հորատված հզորությունը՝ 2,7-5,1 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն

ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 30% 23.1)II, 70% 7.3)III կարգ է:

**Շերտ-2**

Բուսահող (տարբեր բույսերի մնացորդներ, ավազակավ):

Շերտի հորատված հզորությունը՝ 0,3-5,1 մետր է:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն

ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 30% 8.2) II, 70% 33.3)II կարգ է:

**Շերտ-3 (el-del-$Cr_{1-2}$)**

Կավ՝ կիսապինդ մածուցիկության թեթև փոշային: Գրունտը թույլ ուռչող է:

Շերտի հորատված հզորությունը՝ 4,8-9,7 մետր է:

Ներքին-վերին կավճի հասակի էլյուվիալ-դելյուվիալ նստվածքներ են:

Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն

ՀՀՇՆ 32-01-2022-ի աղ.101-ի 7.3) III կարգ են:

**Շրջանի գեոմորֆոլոգիան** ուսումնասիրվող տարածքը ծովի մակերևույթից գտնվում է 750-900 մ բարձրության վրա, հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք ընդհանուր թեքությամբ: Սևքարը ծավալված է Աղստև և Սևքար գետերի միջև:

Հետազննվող տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 858,5-859,5 մետրերի սահմաններում:

**Երկրաբանական կառուցվածքում** մասնակցում են ներքին վերին կավճի հասակի ապարների հողմահարված շերտերը: Հետազննվող հողատարածքի գրունտները ներկայացված են ավազակավերով, կավերով:

### 8.1.1. Կլիմա և օդային ավազան

**<u>Կլիման</u>** ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Իջևան համայնքի Սևքար բնակավայրում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները:

Ստորև բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Սևքարի և Իջևանի օդերևութաբանական կայանների դիտարկումների:

- Տարեկան միջին ջերմաստիճանը 10.8°C
- Օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը 38.0°C
- Օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը -17.0°C
- Օդի միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72%
- Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 471 մմ:
- Քամու միջին տարեկան արագությունը 1.9մ/վ :
- Ձյունածածկի տևողությունը 40օր:
- Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50կգու/մ$^2$ է:
- Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:
- Բնահողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 20սմ:




Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Օդի ջերմաստիճանը, °C

| | | | | |
|---|---|---|---|---|
| [illegible] | Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C | [illegible] | [illegible] | [illegible] |

| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Սևքար | 0.3 | 1.1 | 4.1 | 9.8 | 14.5 | 18.0 | 21.7 | 21.6 | 17.4 | 11.9 | 6.6 | 2.6 | 10.8 | -17 | 38 |

## Օդի հարաբերական խոնավությունը (%)

| **Բնակավայրի անվանումը** | Օդի հարաբերական խոնավությունը, % | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Միջին տարեկան | Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | | Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, % | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին | Միջին ամսական | Միջին ամսական, ժամը 15-ին |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 |
| Իջևան | 69 | 69 | 71 | 72 | 75 | 72 | 69 | 68 | 73 | 77 | 75 | 70 | 72 | 69 | 62 | 69 | 53 |

## Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

| **Բնակավայրի անվանումը** | Տեղումների քանակը Միջին ամսական մմ / Օրական առավելագույնը | | | | | | | | | | | | | Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ | Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ըստ ամիսների | | | | | | | | | | | | Տարեկան | | |
| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Սևքար | 21 | 27 | 40 | 53 | 73 | 68 | 40 | 34 | 35 | 34 | 30 | 16 | 471 | 134 | 337 |
| | 21 | 24 | 32 | 35 | 68 | 67 | 78 | 72 | 38 | 33 | 29 | 19 | 78 | | |

| | Ձյան ծածկույթը |
|---|---|

| **Բնակավայրի անվանումը** | Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ | Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը | Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ | Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Սևքար | - | 40 | 75 | - |

Քամու հաշվարկային արագություն

| Բնակավայրի անվանումը | Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (hՊա) | Միջին տարեկան արագությունը, մ/վ | Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը | Հաշվարկային արագությունը (մ/վ), որը հնարավոր է մեկ անգամ «n» տարիների ընթացքում | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | 25 | 50 | 100 |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| Իջևան | 932.0 | 1.9 | 24 | 25 | 27 | 29 |

| Բնակավայրի անվանումը | Ամիսներ | Կրկնելիություն, % / Միջին արագություն, մ/վ — Ըստ ուղղությունների | | | | | | | | Անդորրի կրկնելիությունը, % | Միջին առավելագույն արագությունը, մ/վ | Գերակշռող ուղղությունը հունիս-օգոստոս ամիսների | Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ | Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար ամիսների | Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Հյուսիսային | Հյուսիս-արևելյան | Արևելյան | Հարավ-արևելյան | Հարավային | Հարավ-արևմտյան | Արևմտյան | Հյուսիս-արևմտյան | | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 |
| Իջևան | Հունվար | 28 | 2 | 1 | 2 | 54 | 10 | 2 | 1 | 28 | 2.8 | Հվ | 1.2 | Հվ | 3.4 |
| | | 1.4 | 1.2 | 1.4 | 3.4 | 3.4 | 3.1 | 2.5 | 1.4 | | | | | | |
| | ապրիլ | 44 | 3 | 2 | 2 | 38 | 7 | 2 | 2 | 21 | 2 | | | | |
| | | 1.9 | 1.8 | 1.4 | 1.9 | 2.0 | 2.1 | 2.1 | 1.9 | | | | | | |
| | հուլիս | 39 | 3 | 2 | 2 | 41 | 8 | 3 | 2 | 21 | 1.9 | | | | |
| | | 2.0 | 1.9 | 1.4 | 1.6 | 1.2 | 1.5 | 1.4 | 2.1 | | | | | | |
| | հոկտեմբեր | 36 | 3 | 2 | 2 | 46 | 8 | 1 | 2 | 27 | 1.5 | | | | |
| | | 1.6 | 1.6 | 1 | 1.5 | 1.7 | 2.1 | 1.8 | 1.5 | | | | | | |

**Օդային ավազան**. Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ հանրապետության տարածքի 45 (այդ թվում՝ 6 դժվարամատչելի և 3 մասնագիտացված) օդերևութաբանական կայանում: Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ իրականացվում են 15 հիմնական անշարժ՝ ակտիվ նմուշառման դիտակայանում, որտեղ դիտարկումներն իրականացվում են ամենօրյա կտրվածքով և 214 շարժական՝ պասիվ նմուշառման դիտակետում, որտեղ իրականացվում են շաբաթական դիտարկումներ: Անշարժ դիտակայաններում կատարվում է հիմնական աղտոտող նյութերի՝ ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, փոշու, փոշու մեջ պարունակող մետաղների և գետնամերձ օզոնի (որպես երկրորդային աղտոտիչ) մոնիթորինգ, իսկ շարժական դիտակետերում՝ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի մոնիթորինգ: Օդի որակի գնահատումը կատարվում է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ համաձայն ՀՀ կառավարության 2006 թ. փետրվարի 2-ի N160-Ն որոշման:

Օդի աղտոտվածության վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ըստ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կայքում տեղադրված «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից, ինչը հրապարակված է (http://meteomonitoring.am/page/1591), ըստ որի օդի որակը բնութագրող որոշ պարամետրերի վերաբերյալ տեղեկատվությունը բերված է հետևյալ աղյուսակում: Սևքար բնակավայրին ամենամոտ դիտակետը գտնվում է Ալավերդի քաղաքում: Ալավերդի քաղաքում և հարակից համայնքներում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 42 դիտակետ և 3 դիտակայան:

2024 թվականին Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Ստորև բերվում է համապատասխան ցուցանիշները:

| Բնակչության քանակը (հազար մարդ) | Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ3) | | | |
|---|---|---|---|---|
| | Փոշի | Ծծմբի երկօքսիդ (SO2) | Ազոտի երկօքսիդ (NO2) | Ածխածնի օքսիդ (CO) |
| 50 -100 | 0.098 | 0.007 | 0.034 | 1.3 |
| 10-50 | 0.095 | 0.006 | 0.033 | 1.1 |
| <10 | 0.071 | 0.006 | 0.023 | 0.8 |

Ըստ Հայաստանի 2011թ. մարդահամարի արդյունքների՝ Սևքարի մշտական բնակչությունը կազմել է 2193, առկա բնակչությունը՝ 1929 մարդ:












### 8.1.2. Հողային ռեսուրսներ.

Հողերի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի համաձայն: Համաձայն Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի (www.armmonitoring.am) էլեկտրոնային էջի՝ 2022 թվականի հողային ծածկույթի՝ ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման՝ 2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրություն է իրականացվել են մի շարք մարզերում՝ այդ թվում Տավուշի մարզում:

Տավուշի մարզի ֆոնային տարածքներում ուսումնասիրված հողերում իրականացվել են մետաղների ընդհանուր և ջրալուծ պարունակությունների որոշում: Ընդհանուր պարունակությունները գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները. քրոմինը՝ 1,9-13,5 անգամ, նիկելինը՝ 1,8-14,5 անգամ, պղնձինը՝ 4,4-51,4 անգամ, ցինկինը՝ 1,6-9,8 անգամ, արսենինը՝ 1,2-12,9 անգամ: Վանադիումի,

կապարի, ծարիրի և մանգանի պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Տարրերի ընդհանուր պարունակությունները հողում հետազոտված նմուշներում շատ ավելի բարձր են դիտվում, քան ջրալուծ տարրերի պարունակությունները:

Սևքար բնակավայրում հետազոտություններ չեն իրականացվել: Իրականացվող գործունեության ընթացքում տարածքին հարակից հողերի վրա ազդեցության մեղմացնող միջոցառումներ են իրականացվելու, տարածքը չի աղտոտվելու ծանր մետաղներով, ինչպես նաև այլ շինանյութերով:

### 8.1.3.Ջրային ռեսուրսներ

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3- րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Խոշոր բնակավայրերից և քաղաքներից հետո չմաքրված կոմունալ-կենցաղային կեղտաջրերի գետին խառնվելուց հետո դիտվում է աղտոտվածության աճ, և հիմնականում ջրի որակը «միջակից» «վատ» է (3-5- րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ և նիտրիտ իոններով:

Տավուշի մարզում ոռոգման նպատակով կառուցված է 4 մեծ ջրամբար /Ջողազի (45 մլն խմ), Հախումի (12 մլն խմ), Տավուշի (5 մլն խմ), Այգեձորի (4 մլն խմ/: Ընդհանուր ծավալը կազմում է 66 մլն խմ: Կառուցված է 56 ջրհան կայան, արտաքին ցանցի երկարությունը կազմում է 178կմ, ներքին ցանցինը՝ 548կմ:

Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից:

Աղստև գետի ջրի որակը 2024թ. Դիլիջան քաղաքից վերև հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), Դիլիջան քաղաքից ներքև հատվածում հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Իջևան քաղաքից վերև և ներքև հատվածներում՝ հոկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

### 8.1.4. Կենսաբազմազություն

**Բուսական աշխարհ**: Տավուշի մարզը գտնվում է Հայասատանի հյուսիս-արևելքում և իր լանդշաֆտային բազմազանությամբ տարբերվում է մյուս մարզերց: Այստեղ հանդիպում են ինչպես կիսաանապատային, այնպես էլ լեռնային անտառային և մարգագետնային բուսատեսակներ: Տարածքի զգալի մասը զբաղեցնում են անտառները: Դրանք տարածված են հիմնականում Տավուշի և

Իջևանի լեռնաշղթաների լանջերին, 800-2100մ բարձրությունների վրա:

Հիմնական ծառատեսակներն են՝ կաղնի (կարմրատերև, սովորական), գիհի, հացենի, թխկի, թեղի, վարդենի:

Թփերից աճում են վայրի վարդ, մոշ, ազնվամորի:

Լեռնային մարգագետիններում հանդիպում են դեղին ցողունիկ, սպիտակ և դեղին երիցուկներ, զանգակներ, վայրի շուշաններ: Գարնանը տարածված են նաև կակաչներ և նարգիզներ: Գետերի ափերին աճում են ուռենի, կռատուկ, կաղամախ, եղինջ, վայրի կաղամբազգիներ:

Տավուշի մարզի տարածքում հանդիպող Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներից են՝

- **Galanthus alpinus Sosn. Ձնծաղիկ ալպիական. Подснежник альпийский**: Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական սպառնալիքը ինտենսիվ հավաքն է որպես գեղազարդային բույս և ապօրինի անտառահատումը, որը պատճառ է դառնում աճելավայրերի խախտմանը: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ: Բազմամյա բույս ոչ մեծ ձվաձև սոխուկով, 2 հակադիր թխակապույտ վաղ գարնանը զարգացող տերևներով: Ծաղկակիրը ծաղկման ժամանակ տերևներից երկար: Ծաղկակիցը փոքր, կծկված: Ծաղիկները սպիտակ, 15-25 մմ երկ., թեքված, ծաղկապատի արտաքին թերթերը նկատելի սապատիկով, ներքինները՝ երիկամաձև կամ V-աձև կանաչ պուտերով: Տուփիկը տանձանման, կամ տակառիկանման, սպին լայնացած, հարթ:

Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Նոեմբերյան, Ոսկեպար, Աչաջուր գյուղերի շրջակայքում): EOO 230 քառ. կմ է, AOO՝ 32 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկասը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 750-1300 մ բարձրությունների վրա. լուսավոր կաղնուբոխու, հաճարենու-բոխու և դաժենու անտառներում, հազվադեպ կենու ստվերոտ անտառում, նոսրացած թփուտների մեջ, կամ շիբլյակում: Ծաղկում է մարտին, պտղաբերում՝ ապրիլին: Գեղազարդային դեղաբույս է:

- **Galanthus lagodechianus Kuth. Ձնծաղիկ լագոդեխիի Подснежник лагодехский**: Վտանգված տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հիմնական

սպառնալիքը ծաղիկների հավաքն է որպես արժեքավոր գեղազարդային բույս և աճելավայրերի պայմանների խախտումը: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված է CITESի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ: Բազմամյա բույս ոչ մեծ ձվաձև սոխուկով: Տերևները նեղգծային, վերևում տափակ (առանց փականիկի), յուղալի փայլով, վաղ գարնանը զարգացող: Ծաղկակիրը ծաղկման ժամանակ տերևներից երկար: Ծաղիկները մանր, մաքուր սպիտակ, 20-25 մմ երկ; ծաղկապատի ներքին մասերի պուտերը փոքր ի շատե նեղ-նալաձև: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի և Բերդի շրջակայքում): EOO 330 քառ. կմ է, AOO՝ 36 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավ-Արևմտյան և Հարավային Անդրկովկասը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1500 մ բարձրությունների վրա կաղնու-բոխու և հաճարենու-բոխու անտառներում, անտառի եզրերին, բացատներում, թփերի մացառուտներում: Ծաղկում է մարտ ամսին, պտղաբերում՝ ապրիլին:

- **Sternbergia colchiciflora Waldst. et Kit. Շտերնբերգիա շնդեղածաղկային Штернбергия зимовникоцветная**: Վտանգված տեսակ: Նախկինում հայտնի էր մեկ աճելավայրից (Իջևանի շրջակայք): Վերջին տարիներին հայտնաբերվել է նաև Երևանի ֆլորստիկական շրջանում, Երևան քաղաքի հյուսիս- արևելյան սահմանների ընդլայման և ամառանոցային հողամասերի տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի 2-րդ հավելվածում: Բեռնի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ: Բազմամյա սոխուկավոր բույս 5-7 սմ բարձր., գնդանման-ձվաձև սոխուկներով՝ ծածկված դարչնագույն, կամ սևավուն թեփուկներով և մինչև 8մմ երկ. վզիկով: Տերևները 3-6, ուշ զարգացող, գծային, գոտիանման, մուգ-կանաչ, մինչև 10 սմ երկ., 3-5 մմ լայն: Ծաղիկները դեղին, 2,5-5 մմ երկ., ծաղկակիցներով: Տուփիկը 8-10 մմ տրամագծով, գնդաձև կամ օվալ: Հայաստանում հանդիպում է Իջևանի (Գետահովիտ գյուղի շրջակայք) և Երևանի (Երևանի շրջակայք) ֆլորիստիկական շրջաններում: EOO 230 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 2: Ընդհանուր արեալը ընդգրկում է Նախակովկասը, Արևելյան Կովկասը, Կենտրոնական և Հարավային Անդրկովկասը, Հարավային Եվրոպան, Բալկանյան թերակղզին, Մոլդավիան, Սևծովյան շրջանը, Ղրիմը, Փոքր Ասիան, Արևմտյան Սիբիրը, Իսրաելը, Իրանը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 600-1500 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, երրորդական դարաշրջանի կավերի վրա, օշինդրային կիսաանապատում, նոսրացած թփուտային մացառուտներում: Ծաղկում է սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ ապրիլ-մայիսին: Կլեյստոգամ բույս է. ծաղիկները մեծամասամբ զարգանում են

սոխուկների մեջ գետնի տակ, պտուղները դուրս են գալիս գետնի երես և հասունանում հաջորդ տարվա գարնանը: Երբեմն ծաղիկները դուրս են գալիս հողի մակերես: Հավանաբար այդ պատճառով տեսակը բնության մեջ դժվար է հայտնաբերվում:

- **Aristolochia iberica Fisch. et C.A.Mey. ex Boiss. Արիստոլոխիա վրացական Кирказон грузинский**: Վտանգված տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայտնի է ընդամենը մեկ խիստ մասնատված պոպուլյացիա հյուսիսային Հայաստանի անտառներում: Տարածման և բնակության շրջանները՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակի տարածման և բնակության շրջաններին սպառնում է կրճատում՝ կապված անտառտնտեսական աշխատանքների իրականացման հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2՝ հազվագյուտ տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս: Ցողունները 25-45 սմ բարձրության, պարզ, չճյուղավորված, ուղիղ կանգնած: Տերևները խոշոր, ամբողջական, լայն սրտաձև-օվալ: Ծաղկապատը խոշոր, 3,5-4,5 սմ, սպիտակականաչավուն, ձագարաձև, կորացած, ծաղիկը տեղավորված է տերևի տակ: Գեղազարդային տեսակ: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում: EOO՝ 310 քառ. կմ, AOO՝ 30 քառ կմ: Լոկալիտետները՝ 5. Տեսակը, բացի Հայաստանից, աճում է նաև Վրաստանում և հյուսիս-արևելյան Անատոլիայում: Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 600—1300 մ բարձրությունների վրա անտառի ծածկոցի տակ: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:
- **Asphodeline lutea (L.) Rchb. Թաղաղու դեղին Асфоделина желтая Կատեգորիա.** Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է: Հայտնի է մեկ փոքրիկ պոպուլյացիա Իջևանի ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ կարգավիճակով: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս տերևակալված հաստ ցողունով 40- 60սմ բարձրության: Տերևները բազմաթիվ գծային-բզաձև, նեղ-եռանիստ: Ծաղկաբույլը խիտ երկար ողկույզի ձևով: Ծաղկակիցները օվալ՝ ծաղկակոթերը գերազանցող, ծաղիկներից կարճ: Ծաղիկները դեղին, ծաղկապատը 2-2,5 սմ երկարության, մասերը երկարավուն-նշտարաձև, մեջտեղում կանաչավուն ջիղով: Պտուղը՝ երկարավուն-գնդաձև տուփիկ 12-15 մմ երկարության, փեղկերի մակերեսը ծածկված անկանոն խոշոր կնճիռներով: Սերմերը 6 մմ տրամագծով, գորշավուն: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ Իջևան քաղաքի շրջակայքում: AOO՝ 4 քառ. կմ: Լոկալիտետը՝ 1: Բացի Հայաստանից աճում է Նախակովկասում,

Չերքեզիայում, հարավ-արևմտյան Անդրկովկասում, Ղրիմում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Իսրայելում, Հորդանանում: Աճում է ստորին լռնային գոտում ծ. մ. 800-1000մ բարձրության վրա. խոտածածկ լանջերին, անտառի եզրերին, կաղնու-բոխու անտառներում: Ծաղկում է մայիսին, պտղակալում՝ հունիսին: Ուտելի բույս է: Արմատները պարունակում են մեծ քանակությամբ լորձ և շաքար: Օժտված է գեղազարդային հատկանիշներով:

- **Echinops tournefortii Trautv. Ոզնագլխիկ Տուրնեֆորի Мордовник Турнефора:** Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա, որը գտնվում է ինտենսիվ տնտեսական գործունեության գոտում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա բույս մինչև 1մ բարձր.: Ցողունը սպիտակ թաղիքային թավոտությամբ, զամբյուղների տակ չտերևակալած: Տերևները շատ փշոտ, գոգավոր, կամ փետրաձև հատված, վերևից՝ ոստայնանման, տակից թաղիքային թավոտությամբ, գեղձերով ծածկված ջղերով: Վրձինը՝ խոզանների փունջը ոչ խիտ հասնում է զամբյուղի կեսը: Ծածկոցի բոլոր տերևները՝ արտաքինները և միջինները երկար կոշտ ցցված փշոտ-թարթիչավոր եզրերով, գագաթում հազվադեպ փոքր կարճոտիկ գեղձերով: Պսակը դժգույն-երկնագույն: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի և Բերդի շրջակայք): EOO 430 քառ. կմ է, AOO՝20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է արևելյան Անատոլիայում և հյուսիս-արևմտյան Իրանում: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1400 մ բարձրությունների վրա. անտառների եզրերին: Ծաղկում է օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, պտղաբերում՝ սեպտեմբեր-հոկտեմբերին:
- **Tragopogon tuberosus K. Koch Սինձ պալարակիր Козлобородник клубненосный:** Խոցելի տեսակ: Կովկասի էնդեմիկ է: Հայաստանում ներկայումս հայտնի են երեք լոկալիտետներ հանրապետության տարբեր մասերում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության մակերեսի կրճատում՝ կապված տնտեսական գործունության, հատկապես քաղաքաշինության և ճանապարհաշինության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում բացակայում է: Բազմամյա խոտաբույս՝ 35-70 սմ բարձրության, որոշ խորության վրա պալարանման հաստացած արմատով: Արմատամերձ տերևները երկար, գծային, ցողունայինները՝ հիմքի մասում շատ լայնացած, դեպի վեր աստիճանաբար նեղացող: Ցողունը ուղիղ, չճյուղավորված: Ծաղկակոթերը զամբյուղների տակ չհաստացած կամ պտղի ժամանակ թեթևակի հաստացող: Ծաղիկները վառ-դեղին: Ծածկոցի թերթերը ծաղիկներին հավասար:

Սերմիկները թմբիկավոր-թեփավոր, կտուցը սերմիկի լայնացած մասից կարճ կամ դրան հավասար: Պապուսը կազմված հիմքում օղակաձև ձուլված փետրաձև մազիկներից: Հայաստանում հանդիպում է Իջևանի (Իջևան), Լոռու (Շահնազար) և Զանգեզուրի (Կապան) ֆլորիստիկական շրջաններում: EOO՝ 6230 քառ. կմ, AOO՝ 12 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը, բացի Հայաստանից, ընդգրկում է Նախակովկասը, Դաղստանը, Արևելյան Անդրկովկասը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 800-1600 մ բարձրությունների վրա.տափաստաններում և մարգագետներում, թփուտների մեջ: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ հունիսին:

- **Pachyphragma macrophyllum (Hoffm.) N. Busch Պախիֆրագմա խոշորատերև Пахифрагма крупнолистная:** Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է անհետացում՝ կապված բնակության միջավայրի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա խոտաբույս 18-45 սմ բարձր.: Կոճղարմատը հաստացած, հորիզոնական: Արմատամերձ տերևները մինչև 18 սմ երկ., կոթերով՝ սրտաձև, կամ սրտաձև- երիկամաձև տերևաթիթեղով: Պսակաթերթերը սպիտակ, 8-–10 սմ երկ.: Ծաղկակոթերը պտուղների ժամանակ հորիզոնական թեքված, 15-20 մմ երկ.: Պատիճակները լայն-հակասրտաձև, 12-–18 մմ լայն., շատ լայն թևերով և ուժեղ հաստացած միջնորմով: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Թեղուտ): AOO 4 քառ. կմ է: Լոկալիտետը՝ 1: Տեսակը, բացի Հայաստանից, աճում է Նախակովկասում, արևմտյան, հարավ-արևմտյան, կենտրոնական Անդրկովկասում, հյուսիս-արևելյան Անատոլիայում: Աճում է ստորին լեռնային գոտում ծ. մ. 700-–1000 մ բարձրությունների վրա անտառներում: Ծաղկում է ապրիլ- մայիս ամիսներին, պտղակալում՝ հունիս-հուլիսին:
- **Gypsophila stevenii Fisch. ex Schrank. Սապնարմատ Ստևենի Качим Стевена**: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Անդրկովկասի էնդեմիկ է: Հայտնի է 1 պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է աճելավայրերի պայմանների խախտում բնակավայրերի ենթակառուցվածքի զարգացման և ճանապարհաշինության հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա բույս 20-40 (60) սմ բարձր.: Տերևները գծային, 1-3 մմ լայն.: Բաժակը 3-3.5 մմ երկ.: Պսակաթերթերը սպիտակ, 1,5 անգամ բաժակից երկար: Ծաղկաբույլի մասում բույսը ծածկված կարճ գեղձային մազիկներով: Հայաստանում հայտնի Իջևանի ֆլորիստիկական

շրջանից (Իջևանի շրջակայք, գյուղ Հովք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի հանդիպում է Արևելյան Անդրկովկասում: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա.

- **Colchicum umbrosum Stev. Ձնդեղ ստվերային Безвременник теневой**: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հնարավոր է տեսակի բնակության շրջանի մակերեսի կրճատում և միջավայրի որակի վատացում աճելավայրերի էկոհամակարգերի վրա շարունակվող ազդեցության հետևանքով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա անցողուն պալարասոխուկավոր բույս: Պալարասոխուկը ծածկված սևավուն-գորշ կաշենման թեփերով: Տերևները 2-5, պտղի ժամանակ շատ մեծացող, գոտիանման, հաստավուն, վերևում և ներքևում նեղացող: Ծաղիկները 1-3, ծիրանեգույն-դժգույն-վարդագույն: Տուփիկը երկարավուն-էլիպսաձև, սրացած, 5 մմ երկ. կտուցով, կարմրավուն-դարչնագույն, մերկ: Սերմերը համարյա գնդաձև, մանր-կնճռոտ, դարչնագույն, 2 մմ տրամագծով: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Թումանյանի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2, որոնց միջև հեռավորությունը 25 կմ է: Հայաստանից բացի աճում է Կովկասում (Արևմտյան Նախակովկաս, Մեծ Կովկաս, Արևմտյան և Արևելյան Անդրկովկաս), Ռումինիայում, Սև ծովի առափնյա շրջաններում, Ղրիմում և Հյուսիսային Անատոլիայում: Աշնանը ծաղկող բույս է: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 700-1400 մ բարձրությունների վրա. նոսրացած անտառներում, անտառային բացատներում և մարգագետնիկներում, թփերի մացառուտներում:
- **Carex depauperata Curtis ex With. Բոշխ աղքատացած Осока обедненная:** Վտանգված տեսակ: Հայտնի է 2 միմյանցից խիստ հեռացած լոկալիտետներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան նվազում է մինչև EN: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ տնտեսական գործունեության և անտառների հատման պատճառով, աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Խիտ ճիմ առաջացնող բույս՝ 15-30 սմ բարձր.: Տերևները 2-4 մմ լայն., նուրբ, ցողունից կարճ: Հասկիկները 1-2 հատ, վարսանդավորները՝ 1-1.5 սմ երկ., առէջավորները՝ 2-3 սմ երկ.: Ծածկող թեփերը պարկիկներից կարճ, կանաչ միջին ջղով և սպիտակ-թաղանթային եզրերով: Պարկիկները 7-8 մմ երկ., փայլուն, եռանիստ, բազմաթիվ ջղերով; կտուցը 3 մմ

երկ., առջևից խորը, մեջքի կողմից՝ թեթևակի ճեղքված: Հանդիպում է Իջևանի (Բագրատաշեն) և Զանգեզուրի (Ներքին Հանդ, Սրաշեն, Ծավ) ֆլորիստիկական շրջաններում: AOO 8 քառ, կմ է: Լոկալիտետները՝ 2, միմյանցից հեռացած 280 կմ: Ընդհանուր արեալը ընդգրկում է Միջին և Հարավային Եվրոպան, Արևմտյան Նախակովկասը, Դաղստանը, համարյա ամբողջ Անդրկովկասը, Անատոլիայի հյուսիս-արևելյան շրջանը: Ամենուրեք հանդիպում է հազվադեպ: Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 445-900 մ բարձրությունների վրա. անտառում, գետահովիտներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիսին:

- **Carex phyllostachys C. A. Mey. Բոշխ տերևահասկային Осока листоколосая:** Խոցելի տեսակ: Հայտնի է 3 լոկալիտետներից, որոնցից մեկը գտնվում է ծայր հյուսիսում, մյուսները՝ ծայր հարավում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված տնտեսական գործունեության և անտառտնտեսական գործունեության պատճառով, աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Տեսակի հիմնական տարածման շրջանը գտնվում է Հայաստանի սահմաններից դուրս, հետևաբար սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա ճիմ առաջացնող խոտաբույս, 20-40 սմ բարձր.: Տերևները գծային, 2-3 մմ լայն.: Ծաղկաբույլի առանցքը ծնկաձև թեքված; վարսանդավոր հասկիկները 1-3 ծաղիկներով: Պարկիկները 5-6 մմ երկ., ուռուցիկ եռանիստ, հասկիկներում անհավասարաչափ բաշխված. ստորինը՝ 6-9 մմ հեռացած վերիններից; կտուցը մինչև 1 մմ երկ., վերևում ատամնավոր: Հանդիպում է Իջևանի (Դեբեդաշենի անտառտնտեսություն), Զանգեզուրի (Ցավ և Վաչագան գյուղերի շրջակայք) և Մեղրու (Վահրավար գետի հովիտ) ֆլորիստիկական շրջաններում: EOO 4900 քառ. կմ է, AOO՝ 12 քառ. կմ: Լոկալիտետները՝ 3: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևելյան Կովկասը, Կենտրոնական, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Թալիշը, Հարավային Եվրոպան, Անատոլիան, Հյուսիսային Իրանը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 700-1800 մ բարձրության վրա. անտառներում, բացատներում, պուրակներում: Ծաղկում է մայիս-հունիսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:
- **Corydalis marschalliana Pers. Անծխուտ Մարշալի Хохлатка Маршалла:** Վտանգված տեսակ: Հանդիպում է միայն Հյուսիսային Հայաստանում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում՝ կապված անտրոպոգեն գործոնների՝ հատկապես անտառահատումների և անտառտնտեսական աշխատանքների հետ:

Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա խոտաբույս՝ 10-15 սմ բարձր.: Արմատը գնդաձև, անկանոն- անկյունավոր պալարով: Ցողունային տերևները 2, հերթադիր, կրկնակի եռմասնյա, կազմված էլիպսաձև կամ երկարավուն ամբողջաեզր մասերից: Ծաղիկները զիգոմորֆ, խոշոր ծաղկակիցներով՝ խմբված ողկույզ ծաղկաբույլում: Բաժակը թաղանթանման, վաղ թափվող: Պսակը տարբեր գույնի՝ դեղին, վարդագույն-դեղին, ծիրանագույնից մինչև սևավուն, լավ արտահայտված երկար խթանով: Տուփիկը երկարավուն, 1.5-2 սմ երկ., կախված: Սերմերը մանր սև փայլուն: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Կողբ, Բերդ, Իջևան, Աչաջուր): EOO 770 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 4: Ընդհանուր արեալը ընդգրկում է Արևմտյան Նախակովկասը, Արևմտյան Կովկասը, Կենտրոնական, Հարավ- Արևմտյան և Հարավային Անդրկովկասը, Ղարաբաղը, Թալիշը, Հարավ-Արևելյան Եվրոպան, Ղրիմը, Անատոլիան և Հյուսիսային Իրանը: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիների ծ. մ. 500-1300մ բարձրությունների վրա. կաղնու-բոխու անտառներում: Ծաղկում է ապրիլ-մայիս ամիսներին, պտղաբերում՝ մայիսին: Հայաստանում այս տեսակի անհատները ցուցաբերում են մեծ փոփոխականություն, որը արտահայտվում է ծաղկի գույնով՝ ծիրանագույնից մինչև սևավուն, թեև տեսակը հայտնի է դեղինի տարբեր երանգներով: Ունի գեղազարդային հատկանիշներ:

- **Tulipa sylvestris L. Վարդակակաչ անտառային Тюльпан лесной**: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ ֆլորիստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա սոխուկավոր բույս 20-50 սմ բարձր.: Սոխուկը ծածկված բաց գույնի, թեթևակի կաշենման, միայն վզիկի և հիմքի մասում կոշտամազ թեփուկներով: Տերևները գծային-նշտարաձև, սովորաբար ուղիղ կանգնած, հաճախ կարմրավուն եզրերով: Ծաղիկը մեծ 2-4 սմ երկ. ներսից վառ-դեղին, արտաքինից ծիրանի-կանաչավուն: Առէջաթելերը ամբողջ երկարությամբ լայնացած: Սերմնարանը իլիկաձև: Տուփիկը երկարավուն-եռանիստ, հանկարծակի սրածայր: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Այգեպար, Մոսես, Ներքին Կարմիր): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Ընդհանուր արեալը ընդգրկում է Հարավային Անդրկովկասը, Իտալիան, Սիցիլիա և Սարդինիա կղզիները և Հյուսիսային Իրանը: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. խոտածածկ լանջերին, ցանքերում, անտառի եզրերին: Ծաղկում է ապրիլին, պտղաբերում՝ մայիսին:

- **Taxus baccata L. Կենի հատապտղային Тисс ягодный**: Վտանգված տեսակ: Երրորդական դարաշրջանի այս ռելիկտային տեսակը տարածված է Իջևանի և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններում, առաջացնելով մի քանի համեմատաբար խոշոր պուրակներ և հանդիպելով առանձին ծառերի ձևով հաճարի և կաղնու անտառներում: Այդ պուրակներից մի քանիսը աճում են Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքներում: Տեսակի աճման պայմանների փոփոխությունը կարող է հանգեցնել բնակության շրջանի կրճատմանը: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Մշտադալար ծառ մինչև 25 մ բարձրությամբ, կարմրա-մոխրագույն բնով մինչև 1 մ տրամագծով հարթ կամ թիթեղիկավոր: Տերևները 5-8 տարի մնացող երկարա-նշտարաձև տափակ ելուստային ջղերով սուր կարճ կոթուկով, փայլուն: Հատապտուղը վառ կարմիր: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի (Ախնաբադի և Ոսկեպարի կենու պուրակներ և շրջակա անտառներում) և Զանգեզուրի („Շիկահող“ պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 2870 քառ. կմ է, AOO՝ 64 քառ. կմ: Լոկալիտետները՝ 11. Բացի Հայաստանից աճում է, Կովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Հարավային Աֆրիկայում, Փոքր Ասիայում: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում ծ. մ. 700-1500 մ բարձրրությունների վրա. գետերի ափերին, անտառներում: ՈՒՆի արժեքավոր բնափայտ:
- **Listera ovata (L.) R.Br. Երկտերևի ձվաձև Тайник яйцевидный**: Կրիտիկական վիճակում գտնվող տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Տեսակի աճելավայրերը կարող են տուժել անտառտնտեսական գործունեության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: Ընդգրկված է CITES-ի կոնվենցիայի հավելվածում որպես Orchidaceae ընտանիքի ներկայացուցիչ: Բեռնի կոնվենցիյի հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա կարճ կոճղարմատով խոտաբույս 25-60 սմ բարձր.: Ցողունները տերևներից վերև գեղձային թավոտությամբ: Զարգացած տերևները 2, էլիպսաձև, 5-10 սմ երկ. 3-8 սմ լայն., հակադիր մոտեցած ցողունի կենտրոնում: Ծաղիկները կանաչավուն: Շուրթը դեղնավուն կանաչ, հակասեպաձև, գագաթում խոր երկհատված: Բարձրարժեք գեղազարդային բույս է: Հայաստանում աճում է Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևանի շրջակայք): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետը՝ 1: Հայաստանից բացի աճում է համարյա ամբողջ Կովկասում, Եվրոպայում, Ասիայի սառը և բարեխառն շրջաններում, ներմուծվել է Հյուսիսային Ամերիկա: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1200 մ բարձրությունների վրա. հաճարենու և

հաճարենուկաղնու անտառներում: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

- **Festuca drymeja Mert. et W.D.J.Koch Շյուղախոտ անտառային Овсяница лесная**: Խոցելի տեսակ: Հայտնի է 4 պոպուլյացիաներ Հայաստանի հյուսիսում և հարավում: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված անտառտնտեսական գործունեության պատճառով առաջացող աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Բազմամյա խոտաբույս երկար սողացող կոճղարմատով: Ցողունները ուղիղ կանգնած 50-150 սմ բարձր.: Տերևապատյանները առանցականջուկների, թիթեղները հարթ, 5-15 մմ լայն: Ծաղկաբույլը փռված հուրան: Ստորին ծաղկային թեփերը վերին մասում ողնուցավոր, անքիստ: Հայստանում հանդիպում է Իջևանի (Նոյեմբերյան, Շամշադին, Մարգահովիտ) և Զանգեզուրի („Շիկահող“ պետական արգելոց) ֆլորիստիկական շրջաններում: EOO 8200 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ: Լոկալիտետները՝ Հայաստանից բացի աճում է Կովկասում, Եվրոպայում, Անատոլիայում և Հյուսիսային Իրանում: Աճում է ստորին լեռնային գոտուց մինչև վերին լեռնային գոտու ծ. մ. 800-2200 մ բարձրությունների վրա. անտառներում, ավելի հաճախ հաճարի անտառում: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղակալում՝ հուլիս-օգոստոսին:

- **Cyclamen vernum Sweet Արջտակ գարնանային Дряква весенняя:** Խոցելի տեսակ: Հայտնի է մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է չափից ավելի հավաքը՝ որպես գեղազարդային տեսակ, ճանապարհաշինությունը, անտառների հատումը: Սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU, քանի որ հայկական պոպուլյացիան սահմանակից է վրացականին: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 0 կարգավիճակով՝ անհետացած տեսակ: Վերջին տարիներին կրկին հայտնաբերվել է և պոպուլյացիայի վիճակը համեմատաբար լավ է: Cyclamen ցեղը ամբողջությամբ ընդգրկված է CITES-ի կոնվեցիայի հավելվածում: Բեռնի կոնվենցիաների հավելվածում ընդգրկված չէ: Բազմամյա պալարավոր խոտաբույս 5-10 սմ բարձր.: Պալարները 3-5, երբեմն մինչև 10 սմ տրամագծով: Տերևները լայն ձվաձև, վերևից սպիտակավուն-արծաթագույն խալերով, տակից բոսորագույն-կարմիր: Պսակի մասերը օվալ 9-12 մմ երկ., մեջտեղից վերև ամենամեծ լայնությամբ, մուգ-կարմիր-մանուշակագույն, բաց-մանուշակագույն-վարդագույն, հազվադեպ սպիտակ, հիմքի մոտ մուգ մանուշակագույն խալով և երկու սպիտակ խալիկներով՝ եռձալի վրա: Գեղազարդային բույս է: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի

ֆլորիստիկական շրջանում (Աչաջուր, Գետահովիտ, Կողբ): EOO 460 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի հանդիպում է Մեծ Կովկասում, Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1200 մ բարձրությունների վրա. անտառներում, անտառի եզրերին, բացատներում: Ծաղկում է հունվար-մարտ ամիսներին, պտղաբերում՝ փետրվարմարտին:

- **Clematis vitalba L. Հոտոտ խաղողատերև Ломонос виноградолистный:** Վտանգված տեսակ: Հայտնի է միայն 1 պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 10 քառ. կմ-ից պակաս է: Նկատի ունենալով տեսակի շատ լայն ընդհանուր տարածումը, սպառնալիքի կատեգորիան իջեցվել է մինչև EN: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Սողացող թուփ 2—5 մ երկ. ցողուններով: Տերևները երկար կոթուններով, փետրաձև բաժանված, սրտաձև հիմքով ձվաձև սուր տերևիկների: Ծաղկաբույլը հուրանաձև, բազմածաղիկ: Ծաղիկները ակտինոմորֆ: Ծաղկապատի տերևիկները դեղնավուն, 8-12 մմ երկ: Պտուղը բազմաընկույզիկ; ընկույզիկները բարակ երկար աղվամազով ծածկված կտուցով: Հայաստանում հայտնի է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանից (Նոյեմբերյան, Ջուջևան): AOO 8 քառ. կմ է, լոկալիտետները՝ 2: Հայաստանից բացի աճում է Կովկասում, Ատլանտյան Եվրոպայում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Ղրիմում, Հյուսիսային Անատոլիայում: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 700-1000 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին, թփերի մացառուտներում, ցանկապատների երկարությամբ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:
- **Crataegus microphylla K.Koch Սզնի, Ալոճ փոքրատերև Боярышник мелколистный**: Վտանգված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված չէր: Ընդգրկված չէ նաև CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Թուփ՝ 2-2.5 մ բարձր., մոխրագույն կեղևով, փոքրաթիվ բարակ փշերով: Տերևները 1-3 սմ երկ., 1-1.8 սմ լայն., սկզբում երկու կողմից թավոտ, հետագայում համարյա մերկ, (3)5-7 բաժանված, մեծամասամբ երկարավուն-ձվաձև, հազվադեպ օվալ ատամնաձև կամ աղեղնաձև եզրերով: Ծաղկաբույլը 4-10 ծաղիկներով: Պտուղները 9-12 մմ երկ., երկարավուն-էլիպսաձից մինչև տանձանման: Հանդիպում է Իջևանի (Կիրանց, Ոսկեպար, Շամլուղ, Ախտալա) և Զանգեզուրի (Ներքին Հանդ, Վերին Խոտանան) ֆլորիստիկական շրջաններում: EOO 3500 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 4: Հայաստանից բացի աճում է Արևմտյան Նախակովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Նախիջևանում, Թալիշում, Իրանում:

Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 800-1200 մ բարձրությունների վրա. անտառի եզրերին: Ծաղկում է մայիս ամսին, պտղաբերում՝սեպտեմբեր-հոկտեմբերին:

- **Verbascum formosum Fisch. ex Schrank Խռնդատ հիանալի Коровяк прекрасный**: Վտանգված տեսակ: Հայտնի է միայն հանրապետության հյուսիս-արևելյան ծայրամասից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում աճելավայրերի պայմանների փոփոխության պատճառով: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 2 կարգավիճակով՝ հազվագյուտ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա սպիտակ թաղիքային թավոտությամբ բույս: Ցողունը մինչև 1 մ բարձր.: Վարդակային տերևները երկարավուն-նշտարաձև՝ ձգված երկա կոթունի, ցողունայինները՝ ձվաձև-սեպաձև, կարճ կոթերով կամ նստադիր: Ծաղկաբույլը երկար հասկանման ողկույզ:Պսակը մեծ, 3-6 սմ տրամագծով, դեղին, մեջտեղում մեծ սև-մանուշակագույն պուտով: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Չինչին, Կողբ, Այգեպար, Մոսես, Կալաչա,, Նոյեմբերյան, Հաղթանակ գյուղերի շրջակայք): EOO 350 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 3: Հայաստանից բացի աճում է Դաղստանում, Կենտրոնական և Արևելյան Անդրկովկասում: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 600-1000 մ բարձրությունների վրա. չոր քարքարոտ լանջերին, ժայռերի միջև, ճանապարհների մոտ, անտառներում, բացատներում: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-հուլիսին:

- **Smilax excelsa L. Պարիլյակ բարձր Павой высокий**: Վտանգված տեսակ: Հայտնի է մեկ ֆլորստիկական շրջանից: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Աճում է անտառային գոտում, որը ենթարկվում է մարդածին զգալի ճնշման: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 4 կարգավիճակով՝ անորոշ տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Փաթաթվող կամ սողացող երկտուն թուփ մերկ փշոտ ցողուններով: Կոճղարմատը ամուր, երկար, սողացող: Տերևները հերթադիր, լայն-ձվաձև, վերին մասում սրացած, ցանցաջիղ; կոթերը 1-1,5 սմ երկ., հիմքի մոտ երկու ոլորված բեղիկներով: Ծաղիկները կանաչավուն, 5-7 մմ երկ., հավաքված կիսահովանոցներում՝ 4-10-ական: Հատապտուղը կարմիր, գնդաձև: Հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Այրում, Նոյեմբերյան, Բերդ, Իջևան, Այգեհովիտ, Ախթալա): EOO 360 քառ. կմ է, AOO՝ 20 քառ. կմ, լոկալիտետները՝ 5: Ընդհանուր տարածումը ընդգրկում է Նախակովկասը, Դաղստանը, Արևմտյան, Հարավ- Արևմտյան, Կենտրոնական, Արևելյան և Հարավային Անդրկովկասը, Միջերկրածովյան

ավազանը, Ղրիմը, Անատոլիան, Սիրիան և Հյուսիսային Իրանը: Աճում է ստորին լեռնային գոտում, ծ. մ. 500-1000 մ բարձրությունների վրա. խոնավ անտառներում, գետերի երկարությամբ: Ծաղկում է հունիս ամսին, պտղաբերում՝ հուլիս-օգոստոսին:

- **Atropa bella-donna L. Շիկատակ, մահամորմ, լուսնի ծաղիկ Красавка белладонна**: Խոցելի տեսակ: Հանրապետությունում հայտնի են սակավաթիվ պոպուլյացիաներ, թեև ընդհանրապես լայնորեն տարածված տեսակ է: Տարածման շրջանի մակերեսը 20000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 2000 քառ. կմ-ից պակաս: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված բնական պայմանների փոփոխության հետ՝ անտառային էկոհամակարգերի վրա ազդեցության պատճառով (անտառտնտեսական աշխատանքներ, ենթակառուցվածքի զարգացում, ռեկրեացիոն տրորում): Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 3 կարգավիճակով՝ կրճատվող տեսակ: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Բազմամյա կոճղարմատավոր խոտաբույս մինչև 2 մ բարձր.: Ցողունները թխակապույտ, մերկ: Տերևները ձվաձև խոշոր, մինչև 20 սմ երկ. և մինչև 12 սմ լայն.: Ծաղիկները մանուշակագույն-գորշավուն: Պտուղը սև, փայլուն, բազմաթիվ սերմերով: Թունավոր բույս է: Հայտնի է Իջևանի, Լոռու և Զանգեզուրի ֆլորիստիկական շրջաններից: EOO 5700 քառ. կմ է, AOO՝ 48 քառ. կմ, լոկալիտետները՝ 7: Հայաստանից բացի աճում է Նախակովկասում, Արևելյան Կովկասում, Անդրկովկասում, Միջերկրածովյան ավազանի երկրներում, Ղրիմում, Անատոլիայում, Հյուսիսային Իրանում: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 800-1700 մ բարձրությունների վրա. անտառներում, բացատներում, գետերի ափերին: Ծաղկում է հունիս-հուլիս ամիսներին, պտղաբերում՝ օգոստոսսեպտեմբերին:

- . **Staphylea pinnata L. Կոռն փետրավոր, Ջոնջոլ Клекачка перистая**: Խոցելի տեսակ: Հանդիպում է միայն հանրապետության հյուսիսում: Տարածման շրջանի մակերեսը 5000 քառ. կմ-ից պակաս է, բնակության շրջանի մակերեսը՝ 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների կրճատում՝ կապված տեղական բնակչության կողմից օգտագործելու և անտառտնտեսական աշխատանքների հետ: Քանի որ Հայաստանում գտնվում է տեսակի տարածման եզրային հատվածը, իսկ հիմնական արեալը հանրապետության սահմաններից դուրս է, սպառնալիքի կատեգորիան նվազեցվում է մինչև VU: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա: CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում ընդգրկված չէ: Թուփ կամ փոքր ծառ 2-6 մ բարձր., եղանաձև դեղնա-գորշավուն ճյուղերով, կանաչ

խոտային միամյա ընձյուղներով: Տերևները երկարակոթ, կենտ փետրաձև, կազմված 5-7 լայն նշտարաձև կամ էլիպսաձև, մերկ, ատամնաեզր, վերևից մուգ կանաչ, ներքևի կողմից բաց գույնի տերևիկներից: Ծաղկաբույլը երկար, կախված, բարդ ողկույզ: Ծաղիկները սպիտակ, բաժակաթերթերը և պսակաթերթերը 8-10 մմ երկ.: Պտուղը փքված տուփիկ, գագաթներով հանդիպող փեղկերով: Հայաստանում հանդիպում է միայն Իջևանի ֆլորիստիկական շրջանում (Իջևան, Բարեկամավան, Սևքար, Բագրատաշեն, Շամշադին): EOO 600 քառ. կմ է, AOO՝ 24 քառ. կմ: Լոկալիտետները՝ 5: Հայաստանից բացի տեսակը հանդիպում է Նախակովկասում, Արևմտյան և Արևելյան Անդրկովկասում, Եվրոպայում, Միջերկրածովյան երկրներում, Բալկանյան թերակղզում և Փոքր Ասիայում: Աճում է ստորին լեռնային գոտու ծ. մ. 600-950 մ բարձրությունների վրա. հիմնականում բոխու անտառներում, որտեղ երբեմն (Բարեկամավան գյուղի շրջակայք) հանդիսանում է ենթանտառի գերիշխող տեսակը: Ծաղկում է մայիս-հունիս ամիսներին, պտղաբերում՝ հունիս-օգոստոսին:

- **Boletus satanas Lenz Սատանայասունկ, դիվասունկ**,: Վտանգված (EN – Endangered): Գլխարկը 8-25 սմ տրամագծով, սպիտակա-մոխրագույն, բարձիկաձև, մսալի, հարթ, թավշանման, մերկ, չոր, երբեմն անձրևից հետո լորձնային: Գլխարկի ստորին մասը սպունգանման է՝ մանր ծակոտիներով, սկզբում՝ դեղնականաչավուն, հասուն տեսակներինը՝ կարմիր, կարմրածիթապտղագույն: Պտղամիսը սպիտակ է, սպիտակավուն, ամուր, կտրվածքին սկզբում կարմրում է, ապա կապտում, տհաճ հոտով և քաղցր համով: Ոտիկը 6-9 x 5–11 սմ, դեղնակարմրավուն, ցայտուն արտահայտված մուգ կարմիր ցանցիկով, կենտրոնական: Գավազանաձև է, դեպի հիմքը հավասար լայնացած: Սպորափոշին ձիթապտղագույն է: Սպորները 11-14 x 5-5 մկմ, իլիկաձև, հարթ, ձիթապտղագույն: Տարածվածությունը՝ Ընդհանուր՝ Եվրոպա, Ասիա, Հյուսիսային Ամերիկա, Հարավային Կովկաս /Վրաստան, Հայաստան/: Հայաստանում հանդիպում է հազվադեպ, եզակի առանձնյակներով, հայտնաբերված է Իջևանի ֆլորիստիկական շրջանում՝ «Դիլիջան» ազգային պարկ, Զանգեզուրի ֆլորիստիկական շրջանում՝ Գորիսի շրջակայք, Մեղրիի ֆլորիստիկական շրջանում՝ գյուղ Արևիկ: Էկոլոգիայի, կենսաբանության և ֆիտոցենոլոգիայի առանձնահատկությունները: Հանդիպում է հողի վրա, խառն անտառներում, 600-1500 մ բարձրություններում, հուլիսից մինչև սեպտեմբեր: Միկորիզագոյացնող սունկ է՝ համակեցության մեջ է մտնում փշատերև և լայնատերև ծառատեսակների, հիմնականում կաղնու և հաճարենու հետ: Թունավոր տեսակ է:

**Կենդանական աշխարհ:**

Տավուշի մարզի տարածքում հանդիպող Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներից են.

• **Նմանաձև ճպուռ Onychogomphus assimilis fulvipennis** (Schneider, 1845) Կարգ՝ Ճպուռներ - Odonata Ընտանիք՝ Գոմֆիդներ - Gomphidae Հազվագյուտ տեսակ է, ոչ մեծ, կտրատված, հավանաբար, ռելիկտային արեալով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1b+B2b: Տեսակը ընդգրկված էր ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում (ver 3.1.) որպես «Խոցելի» VU B1a+B2a: Ընդգրկված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում: Միջին չափի ճպուռ է մարմնի երկարությունը 50-55 մմ, սևադեղնավուն հակադիր գունավորմամբ: Վերին շրթունքն ունի լավ արտահայտված սև գույնի եզրակ: Կրծքի կողքերը սև գույնի լայն զոլերով են, փորիկի տերգիտները՝ կողքերին երկար, նեղ ելուստներ ունեցող սև բծերով: Տարածվածությունը: Հայտնի է Առաջավոր Ասիայից, Կովկասի և Հարավային Թուրքմենիայի մի շարք մեկուսացած տեղավայրերից: Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է Տավուշի Իջևան ք. շրջակայք, Վայոց Ձորի Վայք ք. և Գետափ ու Վերնաշեն գյուղեր և Սյունիքի Քարահունջ գյուղ մարզերից:

<u>Ապրելավայրերը</u>. Մասամբ ստվերոտ և հաճախ սառը նախալեռնային գետեր՝ ինչպես կիսաանապատային, այնպես էլ անտառային գոտում: <u>Կենսաբանության առանձնահատկությունները</u>. Թռչում են հունիս-հուլիս ամիսներին, հանդիպում են գետերի ափերին, հաճախ նստում են քարերի վրա: Ձվերը դնում են դանդաղ հոսացող ջիր մեջ: Զարգացումը տևում է 2-3 տարի:

• **Յացենկո-Խմելևսկու առվակային գնայուկ Duvalius yatsenkokhmelevskii** (Khnzorian, 1960). Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Գնայուկ բզեզներ - Carabidae <u>Կարգավիճակը.</u> Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR B2a:

<u>Համառոտ նկարագրությունը.</u> Մանր բզեզ է (մարմնի երկարությունը 6,5 մմ), ունի ձգված, չափավոր ուռուցիկ մարմին, ծածկույթները փայլուն են, կարմրագորշավուն: Տարածվածությունը: Հայաստանի էնդեմիկ է: Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է միայն Իջևան քաղաքի շրջակայքից (Տավուշի մարզ):

<u>Ապրելավայրերը.</u> Բնակվում է սաղարթավոր անտառում՝ աղբյուրի մոտ: <u>Կենսաբանության առանձնահատկությունները.</u> Հայտնի չեն, բզեզները հանդիպում են մայիս- հունիս ամիսներին՝ գերխոնավ հողերում և անտառային փռվածքում:

• **Զարդավոր չրխկան Aeoloides figuratus** (Germar, 1844) Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Չրխկաններ – Elateridae <u>Կարգավիճակը.</u> Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով

գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a:

• Համառոտ նկարագրությունը. Փոքր բզեզ է (մարմնի երկարությունը 4,5-5,5 մմ): Մարմինը մուգ գորշագույն է, վերջույթները՝ բաց գորշավուն, առաջնամեջքը՝ կարմրագորշագույն՝ ոչ ցայտուն արտահայտված սև բծով, վերնաթևերը մուգ գորշագույն են՝ երկու դեղին գագաթնային և երկու վատ արտահայտված եզրերով հիմնային բծերով: Տարածվածությունը. Անդրկովկաս, Առաջավոր և Միջին Ասիա, Իրան, Աֆղանստան, Իրաք, Արաբական թերակղզի:

Տարածվածությունը Հայաստանում. Հայտնի է Տավուշի մարզի ք. Իջևան, Բերդ, գ. Աճարկուտ և Բագրատաշեն), Արմավիրի (Փշատավան գ. շրջակայք) և Սյունիքի (Մեղրի գետի ափ՝ Մեղրի ք. մոտ) մարզերից: Ապրելավայրերը. Հոսուն ջրի լողափ:

Կենսաբանության առանձնահատկությունները. Հայտնի չեն, բզեզները հանդիպում են խոնավ ավազում և մանր ռիկված գետաքարերում՝ ջրի մոտ:

• **Սոմխետական չրխկան Cardiophorus somcheticus Schwarz,** 1896 Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Չրխկաններ – Elateridae

Կարգավիճակը. Ծայրահեղ սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1+ B2a:

Համառոտ նկարագրությունը. Փոքր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 5,3-5,9 մմ): Մարմինը և բեղիկները սև են, առաջնամեջքը՝ կարմիր, ոտքի առջևի եզրին չհասնող ձվաձև, կամ խաչաձև սև բծով, ազդրերը կարմրագորշագույն են: Տարածվածությունը. Հայաստանի էնդեմիկ է: Տարածվածությունը Հայաստանում: Նկարագրված է «Սոմխեթից» Schwarz, 1896), ներկայում հայտնի է Իջևան ք. շրջակայքից (Տավուշի մարզ):

Ապրելավայրերը. Սաղարթավոր անտառների բացատներ: Կենսաբանության առանձնահատկությունները: Հայտնի չեն, բզեզները հանդիպում են հունիսի վերջին-հուլիսին՝ հովանոցազգի բույսերի ծաղիկների վրա:

• **Հայկական ծաղկեփոշեկեր Isomira armena Khnzorian**, 1976 Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Ծաղկեփոշեկերներ – Alleculidae

Կարգավիճակը. Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգավաժ»՝ EN B 1a: Համառոտ նկարագրությունը: Ոչ լայն ձվաձև մարմնով մանր չափի բզեզ է (մարմնի երկարությունը 5-6,5 մմ): Գունավորումը բացից մինչև մուգ գորշագույն, ոտքերը բաց գորշագույն են: Հայաստանի էնդեմիկ է: Տարածվածությունը Հայաստանում: Իջևան քաղաքի շրջակայք և Թեղուտ գյուղ՝ Հաղարծին վանքի մոտ (Տավուշի մարզ): Ապրելավայրերը. Լայնասաղարթ անտառների բացատներ և անտառեզրեր:

Կենսաբանության առանձնահատկությունները: Հայտնի չեն: Բզեզները հանդիպում են հունիս-հուլիս ամիսներին՝ հովանոցազգի բույսերի ծաղիկների և ծաղկող թփերի վրա: Զարգանում են հավանաբար հողում:

• **Կաղնու մեծ երկարաբեղիկ Cerambyx cerdo acuminatus Motschulsky**, 1852 Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Երկարաբեղիկներ – Cerambycidae

Կարգավիճակը: Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B 2a: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Խոցելի» կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: C. c. cerdo Linnaeus, 1758 ենթատեսակը գրանցված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

Համառոտ նկարագրությունը: Խոշոր չափի բզեզներ են (մարմնի երկարությունը 25-55 մմ). Գունավորումը ձյութի (կուպրի) նման սև է, վերնաթևերի ծայրերը՝ դարչնագույն սև, գորշ կամ շագանակագույն: Արուների բեղիկները մարմնից զգալիորեն երկար են՝ էգերինը հասնում կամ փոքր-ինչ անցնում են վերնաթևերի գագաթը:

Տարածվածությունը: Միջերկրածովային շրջան, Հարավային և Միջին Եվրոպա, Առաջավոր Ասիա, Կովկաս: Տարածվածությունը Հայաստանում: Տեղ-տեղ հանդիպում է ծերացած կաղնու անտառներում՝ մինչև 1800 մ բարձրության վրա, Հայաստանի հարավում՝ մինչև 2300 մ ծ.մ.բ.:

Ապրելավայրերը. Լեռնային անտառներ՝ կաղնու մասնակցությամբ և ծերացած, փչացած բներով ծառերի առկայությամբ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ապրում են կաղնու, ավելի հազվադեպ նաև շագանակենու, հաճարենու և այլ լայնասաղարթ ծառատեսակների վրա: Բզեզները թռչում են հունիսից մինչև օգոստոս, հանդիպում են ծորացող հյութով ծառերի բների, հաստ բներով կերային ծառերի և փչակների վրա, որտեղ էլ կատարվում է զուգավորումը և ձվադրումը: Ձվադրում են կեղևի ճեղքերում, երբեմն կեղևակերների թռիչքային անցքերում: Թրթուրները սկզբնական շրջանում զարգանում են արտաբնափայտում՝ լուբում, այնուհետև անցնում են բնամիջուկ, բայց խուսափում են փտած և վարակված բնափայտից: Զարգացման ամբողջ շրջանը տևում է 4 տարի:

• **Ալպյան ռոզալիա Rosalia alpina** (Linnaeus, 1758) Կարգ՝ Կարծրաթևեր կամ Բզեզներ - Coleoptera Ընտանիք՝ Երկարաբեղիկներ - Cerambycidae Կարգավիճակը: Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B 1a+B2a: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 2.3) «Խոցելի» կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: Գրանցված էր ԽՍՀՄ Կարմիր գրքում:

Համառոտ նկարագրությունը: Խոշոր և միջին չափի բզեզներ են (մարմնի երկարությունը 15-40 մմ), մոխրագորշագույն, երբեմն երկնագույն շողշողյունով, վերնաթևերը սև բծերով են: Բեղիկները մարմնից երկար են ՝ արուներինը 1,5 անգամ, էգերինը՝ աննշան: Տարածվածությունը: Եվրոպա (հյուսիսում մինչև Հարավային Շվեդիա), Մերձավոր Արևելք, Կովկաս, Անդրկովկաս, Ուկրաինա, Մոլդովա, Բելառուսիա, Ռուսաստան, հավանաբար նաև Ղասախստան: Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է Տավուշի (Կիրանց գ., Հաղարծին վանք՝ Տեղուտ գ. մոտ) և Սիունիքի (Շիկահող գ. մոտ) մարզերից:

Ապրելավայրերը. Հաճարենու և թեղու առկայությամբ հին, գերազանցապես լեռնային անտառներ, որտեղ կան խիստ թուլացած, չորացող, ցրտահարված և փչացող բներով ծառեր:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բզեզները հանդիպում են հունիսից մինչև օգոստոս ամիսները, հիմնականում արևոտ եղանակին, ծառերի բների վրա, որտեղ էլ զուգավորվում են և ձվադրում կեղևի ճեղքերում: Զարգացումը կատարվում է 2-3 տարվա ընթացքում՝ կախված բնափայտի վիճակից, եղանակից և այլն:

• **Բրենթիս Ինո Brenthis ino schmitzi Wagener**, 1983 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera Ընտանիք՝ Նիմֆալիդներ – Nymphalidae

Կարգավիճակը: Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B2a:

Համառոտ նկարագրությունը: Ոչ խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 16-18 մմ), թևերի ընդհանուր գուներանգը մուգ կարմրաաղյուսագույն է, առջևի և հետին թևերը՝ սեռին բնորոշ սև պտերի տրամակապերով:

Տարածվածությունը: Փոքր Ասիա, Հարավային Անդրկովկաս: Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է Տավուշի (Իջևան ք. շրջակայք), Գեղարքունիքի (Շորժա), Կոտայքի (Հանքավան, Արզական, Ծաղկաձոր) և Սյունիքի (Քաջարան ք. շրջակայք, լքված գ. Փխրուտ) մարզերից: Ապրելավայրերը. Ենթալպյան մարգագետիններ, անտառի վերին եզրի բացատներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տալիս են մեկ սերունդ, թռիչքը՝ հուլիսի սկզբից մինչև օգոստոսի սկիզբը: Կենսաբանության առանձնահատկությունները Հայաստանի պայմաններում հայտնի չեն: Թրթուրների հավանական կերաբույսը Filipendula ulmaria տեսակն է

• **Ալկոն կապտաթիթեռ Maculinea alcon monticola** (Staudinger, 1901) Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera Ընտանիք՝ Կապտաթիթեռներ - Lycaenidae Կարգավիճակը: Հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես

«Խոցելի»՝ VU B 1a+B2a: <u>Համառոտ նկարագրությունը</u>: Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 15-19 մմ է, էգերինը՝ 13-18 մմ): Արուն վերևից փայլատ մանուշակագույն է՝ արտաքին եզրի մգացումով, լավ արտահայտված դիսկալ և հետդիսկալ պտերի շարքով: Էգը վերևից միատար մուգ շագանակագույն է՝ թույլ արտահայտված դիսկալ պուտով: Թևերի ստորին մակերեսը միատար մուգ մոխրագույն է՝ դիսկալ և հետդիսկալ սև պտերից կազմված լավ արտահայտված նախշով: <u>Տարածվածությունը:</u> Եվրոպա, դեպի արևելք՝ մինչև Կենտրոնական Սիբիր, Փոքր Ասիա, Անդրկովկաս:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հայտնի է Շիրակի (Ջաջուռի լեռնանցք) Տավուշի (Դիլիջան և Իջևան քք. շրջակայք, Աճարկուտ գ.), Կոտայքի (Արզական), Վայոց Ձորի (Գնիշիկ գ. շրջակայք), Սյունիքի (Քաջարան ք. շրջակայք, գ. Շվանիձոր) մարզերից, Արագած լեռան հարավային լանջերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից: <u>Ապրելավայրերը.</u> Չոր մարգագետիններ, բացատներ, քարքարոտ տափաստաններ՝ 1400-2300 մ ծ.մ.բ.:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Տալիս են մեկ սերունդ՝ հուլիսի կեսից մինչև օգոստոսի կեսը: Էգը ձվադրում է Gentiana cruciata բույսի ծաղկաբույլերի մեջ: Երկրորդ-երրորդ հասակի թրթուրները մրջյունների միջոցով տեղափոխվում են մրջնանոց, որտեղ էլ ձմեռում են: Ձմեռումից հետո ավարտում են սնվելը՝ ուտելով մրջյունների թրթուրներին և հարսնյակներին: Հարսնյակավորվում են մրջնանոցում:

- **Արիոն կապտաթիթեռ Maculinea arion zara Jachontov,** 1935 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera Ընտանիք՝ Կապտաթիթեռներ – Lycaenidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակը գտնվում է արեալի սահմանաեզրին: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1a+B2a, ընդգրկված է ԲՊՄՄ (ver 2.3) «Համեմատաբար բարվոք վիճակում գտնվող, սակայն կարող է հայտնվել վտանգված տեսակների թվում» LR/nt կարգավիճակով և Բեռնի կոնվենցիայի Հավելված II-ում: <u>Համառոտ նկարագրությունը</u>: Ոչ խոշոր չափի թիթեռ է (արուների առջևի թևի երկարությունը 16-18 մմ է, էգերինը՝ 15-20 մմ): Արուն վերևից մուգ կապույտ գույնի է՝ արտաքին եզրը խիստ մգացած է, լավ արտահայտված է դիսկալ և հետդիսկալ պտերի շարքը: Էգի նախշը նույնն է, սակայն ավելի լավ է արտահայտված: Թևերի ստորին մակերեսը մոխրագույն է՝ դիսկալ և հետդիսկալ սև պտերի լավ արտահայտված նախշով: Լավ է արտահայտված նաև բազալային փոշեծածկը:

<u>Տարածվածությունը:</u> Եվրոպա, Կովկաս, Փոքր Ասիա, Միջին Ասիա, Ղազախստան՝ մինչև Արևմտյան Սիբիր:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Լայն տարածում ունի: Հայտնի է Շիրակի

(Աշոցքի շրջակայք) Գեղարքունիքի (Սևան քաղաքի շրջակայք, Շորժա), Տավուշի (Սարիգյուղ, Ջուջևան գյուղերի շրջակայք), Կոտայքի (Արզական, Մեղրաձոր, Գողթ, Գառնի գյուղերի շրջակայք), Վայոց Ձորի (Գնիշիկ գյուղի շրջակայք, Արտավան), Սյունիքի (Քաջարան քաղաքի շրջակայք, Կուրիս, Շվանիձոր գյուղեր, Պխրուտ լքված գյուղ) մարզերից և «Խոսրովի անտառ» պետական արգելոցից:

Ապրելավայրերը. Չոր մարգագետիններ, անտառների բացատներ, անտառի վերին եզրերի տափաստանացած հատվածներ: Կենսաբանության առանձնահատկությունները: Տալիս են մեկ սերունդ՝ հունիսի կեսից մինչև հուլիսի վերջը: Էգը ձվադրում է Oryganum vulgare բույսի ծաղիկների մեջ: Երկրորդ- երրորդ հասակի թրթուրները մրջյունների միջոցով տեղափոխվում են մրջնանոց, որտեղ էլ ձմեռում են: Ձմեռումից հետո ավարտում են սնվելը՝ ուտելով մրջյունների թրթուրներին և հարսնյակներին: Հարսնյակավորվում են մրջնանոցում:

- **Կարելինի մռայլ արջաթիթեռ Axiopoena karelini Mnnntrins,** 1842 Կարգ՝ Թեփուկաթևեր կամ Թիթեռներ - Lepidoptera Ընտանիք՝ Արջաթիթեռներ – Arctiidae

Կարգավիճակը: Սահմանափակ արեալով հազվագյուտ տեսակ է: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B 1ab(iii)+B 2ab(iii):

Համառոտ նկարագրությունը: Խոշոր չափի թիթեռ է (առջևի թևի երկարությունը 45-48 մմ ): Առջևի թևերը սև ածխագույն են՝ մետաքսային շողշողյունով, հետին թևերն աղյուսագույն կարմիր են, իսկ արտաքին եզրը՝ կարմրամոխրագույն: Օձիկը կարմիր է, փորիկը՝ կարմրագորշագույն՝ սև ծայրով:

Տարածվածությունը: Ռուսաստանի Կրասնոդարի երկրամաս (ք.Սոչի), Վրաստան, Հայաստան, Թուրքիա, Իրաք:

Տարածվածությունը Հայաստանում: Հայտնի է Երևան քաղաքից (Հրազդան գետի կիրճ, Կենդանաբանական այգի և այլն), Տավուշի (ք.Նոյեմբերյան), Կոտայքի (ք. Աբովյանի շրջակայք), Արարատի (Վեդի ք. մոտակայք) և Սյունիքի (ք. Մեղրի) մարզերից:

Ապրելավայրերը. Չորասեր (քսերոֆիլ) բուսականությամբ լեռնային հատվածներ՝ 600- 1000 մ ծ.մ.բ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տարվա ընթացքում տալիս են մեկ սերունդ, թիթեռները թռչում են մթնշաղին և գիշերը՝ հունիս-հուլիս ամիսներին, որից հետո անցնում են դիապաուզայի: Դիապաուզայի ընթացքում ցերեկը թաքնվում են փոքր քարանձավներում և ժայռերի ճեղքերում, ավարտից հետո՝ օգոստոսին- սեպտեմբերին, վերսկսում են թռիչքը, այդ ժամանակ էլ ձվադրում են:

- **Միջերկրածովային կրիա, Testudo graeca** (Linnaeus, 1758), Կարգ ԿՐԻԱՆԵՐ, TESTUDINES Ընտանիք Ցամաքային կրիաներ, Testudinidae

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 2.3) «Խոցելի»՝ VU A1cd» կարգավիճակով: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2cd; B1a+2ab (iii):

Տարածվածությունը: Հյուսիսային Աֆրիկա (Մարոկկոյից մինչև Լիբանան), Հարավային Եվրոպա (Իտալիա, Հարավային Իսպանիա, Բալկաններ), Հարավ-Արևմտյան Ասիա (Թուրքիա, Իրան, Սիրիա, Լիբանան, Հորդանան, Իսրայել), կղզիներ Մայորկա, Կիպրոս, Սարդինիա, Սիցիլիա, Կանարներ: Հյուսիսային Եվրասիայում հանդիպում է Սև ծովի ափամերձ գոտում՝ ք. Անապայից մինչև ք. Սուխում, ինչպես նաև ավելի լայն տարածքում՝ Արևելյան Վրաստանում, Ադրբեջանում, Դաղստանում:

Տարածվածությունը Հայաստանում: Հանրապետության հյուսիս-արևելյան մասում տարածված է T.g.ibera ենթատեսակը, իսկ հարավային մասում (Արաքս գետի հովտում)՝ T.g.armeniaca ենթատեսակը: T.g.armeniaca ենթատեսակի արեալը տարանջատված է մի քանի պոպուլյացիաների, որոնք գտնվում են Արարատյան հարթավայրում և Հայաստանի ծայր հարավում՝ Մեղրու շրջանում: Ապրելավայրերը. Բնակեցնում է տարբեր ապրելավայրեր՝ չոր տափաստաններ, սարալանջեր՝ ծածկված աղքատ խոտածածկով, թփուտներով, նոսրանտառով, կամ լեռնային անտառով, ինչպես նաև ցածրադիր անտառներ և այգիներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ակտիվ են ապրիլից մինչև նոյեմբերի կեսերը: Ձմեռում են, սովորաբար, աղվեսների և գորշուկների բներում: Սնվում են հյութալի խոտաբույսերով և քիչ քանակությամբ անողնաշարավորներով: Զուգավորումը տեղի է ունենում ապրիլ-մայիսին: Հունիսից սկսած, մեկ սեզոնի ընթացքում ձվադրում են երեք անգամ՝ ձվերը թաքցնելով հողում փորած փոսի մեջ (2-8 ձու): Ինկուբացիան՝ 2-3 ամիս: Սեռահասուն են դառնում կյանքի 12-14 տարում:

- **Մարգագետնային մողես, Darevskia praticola** (Eversmann,1834), Ընտանիք Իսկական մողեսներ, Lacertidae

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2a:

Տարածվածությունը: Բալկանյան թերակղզու հյուսիս-արևմուտք, Կովկաս, Իրանի հյուսիս- արևմուտք:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանի հյուսիսում բնակվում են մեկուսացված պոպուլյացիաներ:

Ապրելավայրերը. Հանդիպում է նախալեռնային, հովտային և լեռնային՝ առավելապես սաղարթավոր անտառներում, որտեղ մնում է անտառեզրում և

բացատներում, ճանապարհաեզրերում և թփուտներում:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները</u>: Սնվում է միջատներով՝ մանր բզեզներով, մրջյուններով, ուղղաթևավորներով, թրթուրներով, սարդերով, որդերով, նպուկներով: Ձմեռումից դուրս է գալիս ապրիլի վերջին: Զուգավորումը՝ մայիսի վերջին, ձվադրումը (2-6 ձու)՝ հունիսի կեսերին-հուլիսի կեսերին: Ձագերը դուրս են գալիս օգոստոս-սեպտեմբերին:

• **Դալի մողես, Darevskia dahli** (Darevsky, 1957) Ընտանիք Իսկական մողեսներ, Lacertidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

<u>Տարածվածությունը:</u> Տարածված է Հյուսիսային Հայաստանի և Հարավային Վրաստանի սահմաններում, մինչև Քուռ գետի նախալեռնային հովտի հյուսիսում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Ժամանակակից արեալը մասնատված է մի քանի մեկուսացված պոպուլյացիաների, որոնք գտնվում են Հայաստանի հյուսիսում:

<u>Ապրելավայրերը.</u> Հանդիպում է կիրճերի չափավոր չոր լանջերին, ժայռերին՝ 900-1700 մ ծ.մ.բ. բարձրության վրա, անտառի գոտում, տեղ-տեղ մտնում է նաև լեռնային տափաստանի քարքարոտ տեղամասեր՝ մնալով անտառաեզրերին, ճանապարհաեզրերին և թփուտներում: Հաճախ բնակվում է անտառածածկ ավերակներում, քարերից սարքված պատնեշներում և շենքերի պատերի վրա:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Ձմեռումից դուրս է գալիս ապրիլի սկզբինկեսին: Սնվում է միջատներով, դրանց թրթուրներով, սարդերով, նեպուկներով և անձրևաորդերով: Բազմանում է կուսածնությամբ: Ձվադրումը՝ հունիսի սկզբին-հուլիսի

• **Ռոստոմբեկովի մողես, Darevskia rostombekovi Darevsky** 1957 Ընտանիք Իսկական մողեսներ, Lacertidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered B1ab(i,iii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B2ab (ii, iii):

<u>Տարածվածությունը</u>: Համեմատաբար սահմանափակ արեալ Հյուսիսային Հայաստանում և Ադրբեջանի հարակից շրջաններում: Հիմնական արեալը զբաղեցնում է Քուռ գետի հովտի միջին աջափնյա հատվածը և աջ վտակների կիրճը՝ Վրաստանի, Հյուսիսային Հայաստանի և Հյուսիս- Արևմտյան Ադրբեջանի սահմաններում: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հանրապետության տարածքում տեսակի արեալը սահմանազատված է Արարատի բարձրավանդակի

անտառային շրջաններով՝ Հյուսիսային Հայաստանի սահմաններում: Արեալի հարավային սահմանն անցնում է Փամբակ և Աղստև գետերի կիրճերով, Բազումի լեռնաշղթայի երկայնքով՝ ք. Սպիտակից արևմուտք: Արեալի հյուսիսային սահմանն անցնում է Պապաքարի լեռնաշղթայի հյուսիս-արևելյան մասով, որտեղ առավել հյուսիսային հայտնաբերման վայրերը հայտնի են Նոյեմբերյանի և Սևքարի շրջակայքից: Բացի այդ, հայտնի է մեկուսացված պոպուլյացիա Սևանա լճի հարավ-արևելյան ափին, գ. Ծովակի շրջակայքում:

Ապրելավայրերը. Տարածված են առավելապես անտառային գոտում, որոշ տեղերում անցնում են լեռնատափաստանային գոտի, 800-1600 մ ծ.մ. բարձրության վրա: Միայն Սևանա լճի ափին հայտնաբերված պոպուլյացիան է բնակվում 2000 մ ծ.մ. բարձրության վրա: Կենսաբանության առանձնահատկությունները: Ձմեռումից դուրս է գալիս մարտի վերջին-մայիսի սկզբին: Սնվում է միջատներով և այլ մանր անողնաշար այլ կենդանիներով: Բազմանում է կուսածնությամբ: Ձվադրումը՝ հունիսի վերջին-հուլիսի սկզբին: Ձվակույտում՝ 2-4 ձու: Ձագերը դուրս են գալիս օգոստոսի վերջին-սեպտեմբերի սկզբին:

- **Սև արագիլ, Ciconia nigra** (Linnaeus, 1758) Կարգ՝ ԱՐԱԳԻԼԱՆՄԱՆՆԵՐ, CICONIFORMES Ընտանիք՝ Արագիլներ, Ciconidae

Կարգավիճակը: Քիչ քանակությամբ նեղ տարածված տեսակ է: Ընդգրկված է եղել նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

Տարածվածությունը: Հանդիպում է Արևմտյան Եվրոպայում, Ռուսաստանում, Փոքր և Միջին Ասիայում, Հարավային Աֆրիկայում: Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում բնադրում է հյուսիսային շրջաններում: Ապրելավայրերը. Բնադրում են գետերի, անտառային ճահիճների, լճերի մոտակայքում գտնվող անտառային զանգվածներում և ժայռոտ ձորերում: Բույնը կառուցում են ծառերի վրա կամ ժայռերի խորշերում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տարվա մեջ բնադրում են մեկ անգամ, դնում են 3-6 ձու: Բազմացումը անազատ պայմաններում գրանցվել է 2007 թ.-ին Խարկովի կենդանաբանական այգում, որտեղ 1 զույգից ստացվել է 3 ձագ:

- **Գառնանգղ (Մորուքավոր անգղ), Gypaetus barbatus Linnaeus**, 1758 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Սակավաթիվ, վտանգված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ և Ռուսաստանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես

«Խոցելի»՝ VU D1: Տարածվածությունը: Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացած է Հարավ-Արևելյան Եվրոպայի, Կովկասի, Մոտ Արևելքի, Փոքր և Միջին Ասիայի լեռներում:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում տարածված է համարյա ամբողջ տարածքում, բացի հանրապետության արևմուտքից և հյուսիս-արևմուտքից:

Ապրելավայրերը. Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ.բ. բարձրություններում: Բնադրավայրերը համարյա չեն փոփոխվել, սակայն կերային բազան նկատելիորեն վատթարացել է՝ կապված վայրի սմբակավորների թվաքանակի կրճատման հետ: Կենսաբանության առանձնահատկությունները: Բները զբաղեցնելու խիստ օրինաչափություն չի դիտվում, սակայն երբեմն զբաղեցնում են նույն բույնը մի քանի տարի շարունակ: Բները, սովորաբար, տեղադրում են ժայռերի եզրերին կամ ժայռային խորշերում, որտեղ ցերեկային արևի ճառագայթները չեն հասնում: Ձվադրման շրջանը տատանվում է լայն սահմաններում, հավանաբար՝ հունվարի սկզբից մինչև մարտի կեսերը: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Ձագերը դուրս են գալիս փետրվարի երկրորդ կեսին: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշ

- **Գիշանգղ, Neophron percnopterus Linnaeus,** 1758 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Սակավաթիվ, վտանգված տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcde+3bcde+4bcde» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN A2bcde+3bcde+4bcde:

Տարածվածությունը: Ենթատեսակը տարածված է Հարավային Եվրոպայից և Աֆրիկայից, դեպի արևելք՝ մինչև Տյան Շան և Պակիստան:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքում:

Ապրելավայրերը. Բնադրում է առավելապես բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում:

Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և գիշատիչների դիակներով՝ հաճախ հավաքելով դրանք ճանապարհների վրա:

• **Սպիտակագլուխ անգղ, Gyps fulvus** (Hablizl, 1783) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

<u>Կարգավիճակը:</u> Սակավաթիվ, վտանգված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ և Ռուսաստանի Կարմիր գրքերում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1: <u>Տարածվածությունը:</u> Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը տարածված է Հյուսիսային Աֆրիկայից՝ Հարավային և Հարավ-Արևելյան Եվրոպայով դեպի հարավ՝ մինչև Սինայ և Հյուսիս-Արևելյան Պակիստան, Կենտրոնական Ասիա, Տաջիկստան և Ալթայ: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հայաստանում հանդիպում է համարյա ամբողջ տարածքով, բացի հանրապետության հյուսիս-արևմուտքից: Ապրելավայրերը. Բնադրում է առավելապես, բարձր լեռների ժայռոտ տեղամասերում, գերադասելով խորը ժայռոտ կիրճերը, որպես կանոն՝ 800-2000 մ ծ.մ. բարձրություններում:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները</u>: Տարեկան ձվադրում են մեկ անգամ՝ մեկ ձու: 2007 թ-ին Երևանի Կենդանաբանական այգում գրանցվել է 3 զույգերի բազմացումը, որոնցից ստացվել են երկու ձագեր: Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում գրանցվել է 9 զույգերի բազմացումը, որոնցից ստացվել են երկու ձագեր: Կերը հայթհայթում է ինչպես բաց լանդշաֆտներում (լեռնային տափաստան, կիսաանապատ, անտառատափաստան), այնպես էլ կիրճերում: Սնվում է կենդանիների դիակներով, հիմնականում՝ մանր և միջին չափերի, սակայն երբեմն սնվում է խոշոր եղջերավոր կենդանիների և այլ խոշոր կենդանիների դիակներով:

• **Օձակեր արծիվ, Circaetus gallicus** (J. F. Gmelin, 1788) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

<u>Կարգավիճակը:</u> Սակավաթիվ, մասնատված արեալով տեսակ է, կրճատվող թվաքանակով: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

<u>Տարածվածությունը:</u> Պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է Հյուսիսային Աֆրիկայում, Եվրոպայում, Կովկասում, Փոքր Ասիայում, Արևմտյան Սիբիրում, և, հավանաբար, Իրանում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հանդիպում է ամենուրեք, բացառությամբ արևմտյան անտառազուրկ շրջաններից:

<u>Ապրելավայրերը.</u> Բնադրում է անտառային շրջաններում (ինչպես խառն, այնպես էլ գիհու նոսրանտառներում): Որսը կատարում է, սովորաբար, բաց տարածքներում:

• **Եվրոպական ճնճղաճուռակ, Accipiter brevipes** (Severtzov, 1850) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

<u>Կարգավիճակը:</u> Քիչ ուսումնասիրված, բնադրող չվող, քիչ տարածված տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՊՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

<u>Տարածվածությունը:</u> Պոպուլյացիայի հիմնական մասը տեղադրվում է Հարավ-Արևելյան Եվրոպայում, բնակվում է նաև Կովկասում և Մերձավոր Արևելքում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հարավային և հյուսիս-արևելյան շրջաններում: Ապրելավայրերը. Գերադասում է անտառները, պտղատու այգիները, գետաձորերը, պուրակները 600-1200 մ ծ.մ. բարձրություններում:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները</u>: Սնունդը հայթհայթում է կիսաանապատներում և այգիներում: Սնվում է մողեսներով, ուղղաթևավորներով, մանր թռչուններով: Բնադրում է ջրային շրջաններում գտնվող գետերի ափերին և այգիներում: Տարեկան ձվադրում են մեկ անգամ: Դնում են 2-3, երբեմն՝ 4 ձու:

• **Ցախաքլորավորս, Accipiter gentilis** (Linnaeus, 1758) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

<u>Կարգավիճակը:</u> Քիչ տարածված, նստակյաց տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); D1:

<u>Տարածվածությունը:</u> Տեսակը տարածված է Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Դանիայում, Պորտուգալիայում, Հունաստանում և Սիրիայում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Անտառային գոտում՝ գրեթե ամբողջ հանրապետությունում:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Գերադասում է խիտ անտառները՝ բացատներով, որսը կատարելով առավելապես անտառներում որտեղ և բնադրում է:

• **Փոքր ենթարծիվ, Aquila pomarina, C. L. Brehm**, 1831 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

<u>Կարգավիճակը:</u> Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՊՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության

միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1: Տարածվածությունը: Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է Կենտրոնական Եվրոպայում, հանդիպում է նաև Հարավ-Արևելյան Եվրոպայում, Կովկասում և Հյուսիսային Իրանում: Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում տարածված է համարյա ամենուրեք, բացառությամբ՝ անտառներից զուրկ արևմտյան և հարավ-արևմտյան շրջանների:

Ապրելավայրերը. Սաղարթավոր և խառը անտառներ: Կենսաբանության առանձնահատկությունները: Բնադրում է անտառների ինչպես փոքր հատվածներում, այնպես էլ խոշոր զանգվածներում: Որսը կատարում է բաց տեղանքներում: Չուի ժամանակ հանդիպում է հանրապետության ամբողջ տարածքում՝ տարբեր լանդշաֆտային գոտիներում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ: Դնում են 2 ձու, սակայն հանիբալիզմի հետևանքով կենդանի է մնում միայն մեկ ձագը:

- **Մեծ ենթարծիվ, Aquila clanga Pallas,** 1811 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Քիչ քանակությամբ հանդիպող, խոցելի տեսակ, որը հանդիպում է Հայաստանում հիմնականում չուի ընթացքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable C2a(ii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(ii):

Տարածվածությունը: Հանդիպում է Գերմանիայից և Բալկանյան թերակղզուց մինչև Ամուրի հովիտ, Արևելյան Տյան-Շանում, Կովկասում և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստանում: Ձմեռում է Հարավ-Արևելյան Անդրկովկասում, Իրանում, Մեսոպոտամիայում, Հնդկաստանում, Բիրմայում, Հարավային Չինաստանում և Եգիպտոսում: Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է լեռնատափաստանային գոտու նախալեռներում, առավելապես հանրապետության հյուսիսային մասում: Ապրելավայրերը. Չուի շրջանում գերադասում է բաց տարածքները՝ դաշտերը, լեռնային տափաստանների և մարգագետինների խոպան հատվածները, երբեմն՝ ճահճացած հատվածները:

Կենսաբանության առանձնահատկությունները: Չուի շրջանում կարող է հանդիպել այլ արծիվների հետ նույն խմբերում:

- **Բլրային արծիվ, Aquila heliaca Savigny,** 1809 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Հայաստանի ֆաունայի համար անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable C2a(ii)» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU C2a(ii):

Տարածվածությունը: Նախկին ԽՍՀՄ եվրոպական մասի հարավային

շրջաններ, Ղազախստան, Ալթայի լեռներ և նախալեռներ, Մինուսինսկի անտառատափաստան, Անդրբայկալ, Անդրկովկաս, Թուրքմենիա, Տաջիկստան, Բալկանյան թերակղզի, Իսպանիա, Հյուսիսային Աֆրիկա, Հարավ-Արևմտյան Ասիա: Վերջին տարիներին խիստ կրճատվել են արեալի արևմտյան և հյուսիսային մասերը: Արևելյան պոպուլյացիաները բավականին կայուն են:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է հիմնականում գարնանային և աշնանային չուի ժամանակ, հավանաբար, հազվադեպ ձմեռում է հանրապետության տարածքում: 1955 թ.-ին առաջին անգամ բնադրում է հայտնաբերվելՆոյեմբերյանի շրջանում, Այրումի մոտակայքում: Նույն շրջանում գերեզմանաարծիվը բնադրել է 1976 թ.-ին և գրանցվել 1978, 1979 թթ.-ին:

Ապրելավայրերը. Բաց տարածություններով հերթափոխվող նոսրացված անտառներ, այգիներ և բարձրաբույն ծառերի խմբեր գետերի հովիտներում: Ապրելավայրերը զգալիորեն քայքայվել են՝ կապված գյուղատնտեսության կարիքների համար դրանց օգտագործման հետևանքով:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բները, որպես կանոն, տեղադրում են բարձր ծառերի վրա, շատ հազվադեպ՝ գետնին: Բնում՝ 1-3 ձու, թխսումը՝ 43 օր: Թխսմանը մասնակցում են երկու ծնողները, սակայն էգի դերն ավելի մեծ է: Ձագերը սկսում են թռչել 2,5 ամսեկան հասակում: Սնվում են մանր կաթնասուններով և թռչուններով, երբեմն՝ սողուններով, ուղղաթևավորներով, միջատներով, կենդանիների դիակներով:

- **Քարարծիվ, Aquila chrysaetos** (Linnaeus, 1758) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Դաշնության Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1: Տարածվածությունը: Իբերիայից և Հյուսիսային Աֆրիկայից դեպի արևելք՝ Եգիպտոսով և Փոքր Ասիայով մինչև Կովկաս և Իրան: Տարածվածությունը Հայաստանում: Նստակյաց: Հանրապետությունում տարածված է համարյա ամենուրեք, խուսափում է ամբողջական անտառային զանգվածներից:

Ապրելավայրերը. Զբաղեցնում է բաց և կիսաբաց տեսակի բիոտոպերը: Կենսաբանության առանձնահատկությունները: Բնադրում է ժայռերի վրա: Որսը կատարում է բաց տեղանքներում՝ դաշտերում, մարգագետիններում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ: Դնում են 1-2 ձու:

- **Գաճաճ արծիվ, Hieraaetus pennatus** (J. F. Gmelin, 1788) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Ճուռակներ, Accipitridae

Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1)

«Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

Տարածվածությունը: Այս ենթատեսակը բնադրում է Հյուսիս-Արևմտյան Աֆրիկայում, Կենտրոնական Ասիայում, Ֆրանսիայում, Հնդկաստանում և Իրանում:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է գրեթե բոլոր արևելյան մասերում՝ զբաղեցնելով անտառային գոտին: Ապրելավայրերը. Նախընտրում է բնադրել լայնատերև և համախառն անտառներում, որսի տարածքը հաճախ գտնվում է բաց լեռնատափաստանային գոտում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Ձվադրում են տարին մեկ անգամ՝ դնելով 2 ձու:

- **Կարմրատոտ բազե, Falco vespertinus Linnaeus,** 1766 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Բազեներ, Falconidae Կարգավիճակը: Անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); D1:

Տարածվածությունը: Եվրոպա, Արևմտյան Սիբիր: Տարածվածությունը Հայաստանում: Արտաշատի, Հոկտեմբերյանի և Էջմիածնի շրջաններ, առավելապես՝ Արաքս գետի հովտում և վտակներում: Բնադրավայրը հայտնաբերվել են նաև Հրազդանի շրջանի գ. Ծաղկաձորում: Դասվում է Հայաստանի բնադրող, չվող թռչունների թվին:

Ապրելավայրերը. Բնակվում են լայնատարած կիսաանապատային և տափաստանային տեղամասերում անտառակների կամ ծառերի առանձին խմբերի առկայությամբ, հաճախ գետերի հովիտներում, կամ այլ ջրամբարների հարևանությամբ, երբեմն՝ նոսրանտառներում և անտառեզրերում, լեռներում՝ մինչև 1500 մ ծ.մ.բ. բարձրություններ: Հայաստանում ապրելավայրերը զգալիորեն քայքայվել են գյուղատնտեսական նպատակով այդ տեղամասերի յուրացման հետևանքով:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բները, սովորաբար, տեղադրված են ծառերի, հազվադեպ՝ հին շինությունների պատերի, կամ տանիքների վրա: Ձվադրում են (2-4, հազվադեպ՝ 6 ձու) մայիսի երկրորդ կեսին-հունիսի սկզբին: Թխսմանը (28-30 օր) մասնակցում են և՛ էգը, և՛ արուն: Ձագերը դուրս են գալիս հունիսի վերջին-հուլիսի առաջին կեսին: Երիտասարդ թռչուններ նկատվում են մինչև հուլիսի վերջը-օգոստոսի երկրորդ կեսը: Սնվում են, հիմնականում, տարբեր միջատներով, մանր սողուններով և կրծողներով, երբեմն՝ մանր թռչուններով:

• **Բալոբան, Falco cherrug J. E. Gray,** 1834 Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Բազեներ, Falconidae

Կարգավիճակը: Հայաստանի համար անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Endangered A2bcd+3cd+4bcd» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN A2bcd+3cd+4bcd:

Տարածվածությունը: Արևելյան Եվրոպայի տափաստանային և անտառատափաստանային գոտիներ՝ մինչև Նախակովկաս, Ղազախստան, Միջին Ասիա, Արևմտյան Սիբիր, Ալթայ, Տուվա, Անդրբայկալ:

Տարածվածությունը Հայաստանում: Հանդիպում է Երևանի շրջակայքում, Գավառի, Վայքի, Արարատի, Վարդենիսի, Ճամբարակի, Ստեփանավանի, Թալինի, Էջմիածնի շրջաններում: Հավանաբար, Հայաստանում նստակյաց, բնադրող տեսակ է:

Ապրելավայրերը. Հավանաբար, Ախուրյանի հովտի ժայռային զանգվածները, որոնք շրջապատված են ծառերից զուրկ կիսաանապատային տեղամասերով: Ներկայումս ապրելավայրերն ինտենսիվորեն օգտագործվում են որպես արոտավայրեր: Կենսաբանության առանձնահատկությունները: Բները, սովորաբար, տեղադրված են ժայռեզրերին և խորշերում: Հայտնի է բնադրում ծառերի վրա : Ձվադրում են ապրիլին, դնելով 1-6, ավելի հաճախ՝ 3-4 ձու: Թխսմանը, որը տևում է 30 օր, մասնակցում են ինչպես էգը, այնպես էլ արուն: Ձվադրման շրջանը՝ 40-45 օր, երիտասարդ թռչուններ նկատվում են հուլիսի առաջին կեսում: Սնվում են միջին չափերի կաթնասուններով և թռչուններով:

• **Սապսան, Falco peregrinus Tunstall**, 1771 Ենթատեսակ Falco peregrinus brookei (Sharpe, 1873) Կարգ՝ ԲԱԶԵԱՆՄԱՆՆԵՐ, FALCONIFORMES Ընտանիք՝ Բազեներ, Falconidae

Կարգավիճակը: Նստակյաց տեսակ է: Ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1: Տարածվածությունը: Տվյալ ենթատեսակը փոքր թվաքանակով հանդիպում է Կենտրոնական և Հյուսիս-Արևմտյան Եվրոպայում, Սիրիայում և Լիբանանում:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է գրեթե ամբողջ տարածքում՝ զբաղեցնելով ժայռային միջավայրերը: Ապրելավայրերը. Բնակվում է ժայռերի առկայությամբ տարբեր տիպի բիոտոպներում:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բնադրում է ժայռերի վրա՝ խորշերում կամ ժայռաքիվերին: Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ձվակույտում՝ 2-4 ձու: 2007 թվականի տվյալներով, Կենդանաբանական այգիների և

ակվարիումների եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի ցանցում գրանցվել է 5 բազմացող զույգ, որոնցից ստացվել է 7 ձագ:

• **Գեղանի կռունկ, Arthropoides virgo Linneus,** 1758 Կարգ՝ ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ, GRUIFORMES Ընտանիք՝ Իսկական կռունկներ, Gruidae

<u>Կարգավիճակը:</u> Հայաստանի համար՝ քիչ տարածված, չվող, հազվագյուտ տեսակ է: որի թվաքանակը վերջին տարիներին զգալիորեն կրճատվել է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii): <u>Տարածվածությունը:</u> Աֆրիկա, Իսպանիայից՝ մինչև Բայկալ, Մոնղոլիա, Միջին Ասիա, Փոքր Ասիա, Անդրկովկաս:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Առավելապես հանդիպում են հանրապետության կենտրոնական և հյուսիսային շրջաններում: Հանրապետությունում հանդիպում են միայն աշնանային և գարնանային չուի շրջաններում 200-300 առանձնյակներից կազմված երամներով: Հանգստի համար օգտագործում են վարելահողերը և գյուղատնտեսական ցանքատարածությունները:

<u>Ապրելավայրերը.</u> Բնակվում է քարքարոտ, ցածր խոտածածկով կիսաանապատներում, նախալեռնային տափաստաններում և գյուղատնեսական ցանքատարածություններում, արոտավայրերում, մարգագետիններում:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Բները պատրաստում են հողի վրա, չոր վայրերում, բայց ջրին մոտ, որը կարող է լինել առվակ, լիճ կամ ճահճուտ, հաճախ՝ նաև բնակավայրերի մոտ: Ձվերը՝ 2, 81-94 մմ, մուգ կաթնագույն, մակերեսային դեղնա-դարչնագույն բծերով: Թխսումը՝ մոտ 30 օր: Ձվից դուրս եկած ձագերը, չորանալուց հետո ի վիճակի են հետևելու ծնողներին:

• **Բվեճ, Bubo bubo** (Linnaeus, 1758) Ենթատեսակ՝ Bubo bubo interpositus (Rothschild and Hartert, 1910) Կարգ՝ ԲՎԱՆՄԱՆՆԵՐ, STRIGIFORMES Ընտանիք՝ Բվեր, Strigidae

<u>Կարգավիճակը:</u> Սակավաթիվ, խոցելի տեսակ է: Գրանցված է Ռուսաստանի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a; C2a(i); D1: <u>Տարածվածությունը:</u> Ենթատեսակի պոպուլյացիայի հիմնական մասը կենտրոնացված է նոմինատիվ ենթատեսակի տարածման շրջանից դեպի հարավ, Բեսարաբիայում, Ղրիմում, Կովկասում, Փոքր Ասիայում, Սիրիայում: Հյուսիսային սահմաններն անցնում են մոտավորապես Խարկովի մարզի հարավային մասերով, Կիևի մարզով, Պոդոլիայով, Բեսարաբիայով, Թավրիզյան տափաստաններով, Դնեպրի ստորոտներով: Հանդիպում է նաև Հյուսիսային Կովկասում, դեպի

արևելք՝ մինչև Էրզրում, դեպի հարավ՝ մինչև Սիրիա, Հյուսիսային Պաղեստին և Հյուսիս- Արևմտյան Իրան:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանում հանդիպում է համարյա ամենուրեք: Ապրելավայրերը. Նստակյաց է: Լայնորեն տարածված է և բնադրում է տարբեր գոտիներում՝ կիսաանապատից մինչև լեռնային տափաստաններ 2700 մ ծ.մ.բ. բարձրություններում: Լեռներում կատարում է ուղղահայաց միգրացիաներ՝ ձմռանը իջնելով հարթավայրեր:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բնադրում է քարանձավներում, ժայռերի միջև և խուլ կիրճերում: Որսի դուրս է գալիս մթնշաղին և որս կատարում մինչև լուսաբաց: Սնվում է, առավելապես, կրծողներով և թռչուններով: Նստակյաց: Բնադրում է փչակներում, արեալի այլ հատվածներում հաջողությամբ բնակեցնում է թռչնաբները: Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 2-4 ձու: Կենդանաբանական այգիների և ակվարիումների Եվրասիական տարածաշրջանային ասոցիացիայի կենդանաբանական այգիներում 2007 թ.-ին գրանցվել են 13 բազմացող զույգեր,մ որոնցից ստացվել են 16 ձագեր

- **Սև փայտփոր, Dryocopus martius** (Linnaeus, 1758) Կարգ՝ ՓԱՅՏՓՈՐԱՆՄԱՆՆԵՐ, PICIFORMES Ընտանիք՝ Փայտփորներ, Picidae

Կարգավիճակը: Հազվագյուտ տեսակ է սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1:

Տարածվածությունը: Եվրոպա, Ասիա:

Տարածվածությունը Հայաստանում: Հանդիպում է Լոռվա, Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերի անտառային շրջաններում: Ապրելավայրերը. Բնակվում է լայնատերև անտառներում՝ բարձրաբուն ծառերի պարտադիր առկայությամբ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Նստակյաց է: Բնադրում է ինքնուրույն փորված ծառաբներում: Տարեկան ձվադրում է մեկ անգամ, ապրիլի սկզբին: Դնում են 1-9, սովորաբար, 4-6 ձու: Ձարգացումը՝ 12-14 օր:

- **Կիսասպիտակավիզ ճանճորս, Ficedula semitorquata** (Homeyer, 1885) Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ, PASSERIFORMES Ընտանիք՝ Ճանճորսներ, Muscicapidae

Կարգավիճակը: Սակավ ուսումնասիրված, օլիգոտոպային տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա՝ DD: Տարածվածությունը: Տեսակը տարածված է Կովկասում և Հյուսիսային Իրանում, դեպի արևմուտք՝ տեղ-տեղ, մինչև

Բալկաններ: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հայաստանում հանդիպում է հյուսիսում, հյուսիս- արևելքում և հարավ-արևելքում՝ բնակեցնելով սաղարթավոր և խառն անտառները:

<u>Ապրելավայրերը.</u> Բնակվում է լայնատերև անտառներում՝ հին փչակավոր ծառերի պարտադիր առկայությամբ:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Տարեկան ձվադրում է մեկ անգամ՝ դնելով 3- 7 ձու: Սնվում է թռչող միջատներով:

- **Իսպանական ճնճղուկ, Passer hispaniolensis** (Temminck, 1820) Կարգ՝ ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ, PASSERIFORMES Ընտանիք՝ Ճնճղուկներ, Ploceidae

<u>Կարգավիճակը:</u> Հայաստանում հազվագյուտ տեսակ է խիստ սահմանափակ արեալով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii): <u>Տարածվածությունը:</u> Հարավային Եվրոպայից, Կանարյան և Միջերկրական ծովի ու Հյուսիսային Աֆրիկայի կղզիներից՝ Փոքր Ասիայով մինչև Աֆղանստան և Հյուսիս-Արևմտյան Հնդկաստան: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հայտնաբերված է Տավուշի մարզի գ. Սևքարի շրջակայքում՝ բնադրավայրում: Ապրելավայրերը. Բնակեցնում է մշակովի լանդշաֆտը՝ այգիները, բնակավայրերի շրջակայքերը:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Հայաստանում չվող, կամ նստակյաց, ձմռանը հանդիպում է Արաքս գետի հովտի եղեգնուտներում: Տարեկան 2, երբեմն 3 ձվադրում, առաջինը՝ ապրիլի կեսերին: Դնում են 2-8, ավելի հաճախ՝ 4-6 ձու: Ջարգացումը՝ հավանաբար, 11-13 օր:

- **Շելկովնիկովի կուտորա, Neomys schelkovnikovi Sat.,** 1913 Կարգ՝ ՄԻՋԱՏԱԿԵՐՆԵՐ, INSECTIVORA Ընտանիք՝ Գետնափորներ, Soricidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN B1a+2a:

<u>Տարածվածությունը:</u> Արևմտյան, Կենտրոնական և Արևելյան Եվրոպա, Առաջավոր, Միջին և Կենտրոնական Ասիա՝ դեպի արևելք՝ մինչև Օխոտյան ծով, Կովկաս, Անդրկովկաս, Իրան, Թուրքիա: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Սյունիքի, Վայոցձորի, Կոտայքի, Տավուշի, Լոռու, Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր: <u>Ապրելավայրերը.</u> Գետերի և գետակների ափերը՝ ինչպես բարձրադիր գոտիներում (մինչև 2500 մ ծ.մ.բ. բարձրություններ), այնպես էլ կիսաանապատներում և անտառային զանգվածներում: Գերադասում են գետասահանքներով, մացառուտներով հատվածները և նոսր բուսածածկով մերկացած, քարքարոտ ափերը:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Ակտիվ են օրվա տարբեր ժամերին և տարվա տարբեր եղանակներին: Կարող են արագ վազել ջրավազանի հատակով, սուզվել և լողալ: Բազմանում են վաղ գարնանից մինչև ամռան վերջը: Բերում են 4-10 ձագ: Սնվում են տարբեր հոդվածոտանիներով, որդերով, փափկամարմիններով, մանրաձկներով, շերեփուկներով, ձկնկիթով և գորտնկիթով, ինչպես նաև մանր կրծողներով: Հայաստանում կուտորայի էկոլոգիան ուսումնասիրված չէ:

• **Սովորական երկարաթև չղջիկ, Miniopterus schreibersi Kuhl,** 1819 Կարգ՝ ՁԵՌՔԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA Ընտանիք՝ Հարթաքթայիններ, Vespertilionidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii):

<u>Տարածվածությունը:</u> Իսպանիա, Աֆրիկա, Մադագասկար, Հնդկաստան, Չինաստան, Միջին Ասիա, Մալայան արշիպելագ, Ճապոնիա, Ավստրալիա, Նոր Գվինեա, Ղրիմ, Կովկաս, Անդրկովկաս: <u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Տարածված է բոլոր շրջաններում, բացի Շիրակի ու Արագածոտնի մարզերից, ինչպես նաև Գեղարքունիքի հյուսիսից: Առավել հաճախ կարելի է հայտնաբերել ք. Երևանում, Արմավիրի, Վայոցձորի և Սյունիքի մարզերում:

<u>Ապրելավայրերը.</u> Բացառապես քարանձավային տեսակ է: Գերադասում են կարստային ծագում ունեցող լայն, լավ օդափոխվող քարանձավները: Սրանց հաճախ կարելի է հանդիպել այլ հարթաքթայինների և պայտաքթայինների հետ:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Ձմռանը լքում են թաքստոցները և հաճախ չվում հանրապետության սահմաններից դուրս: Ակտիվ են վաղ գարնանից մինչև ուշ աշուն: Թռչում են արագ՝ միջատներին բռնելով ջրի մակերեսից, ավտոճանապարհներից և այլ բաց տարածություններից (անտառեզրեր, կիրճեր, գյուղերի և քաղաքների հրապարակներ): Մայիսի վերջում-հունիսի սկզբում էգը ծնում է մեկ ձագ: Որոշ դեպքերում ձևավորում են բազմաքանակ մայրական գաղութներ:

• **Ասիական լայնականջ չղջիկ, Barbastella leucomelas Gretzschmar,** 1830 Կարգ՝ ՁԵՌՔԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA Ընտանիք՝ Հարթաքթայիններ, Vespertilionidae

<u>Կարգավիճակը:</u> Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

<u>Տարածվածությունը:</u> Անդրկովկասից մինչև Դաղստան, Հարավային

Թուրքմենիա, ամբողջ լեռնային Թուրքմենիան և Հիմալայները, մինչև Սի Զուան:

Տարածվածությունը Հայաստանում: Հայաստանն այս սակավաթիվ տեսակի արեալի արևմտյան սահմանն է: ք. Երևանի շրջակայքը, Կոտայքի մարզ (Գառնի, Գեղարդ, Արզնի, Աբովյան), Վայոցձորի մարզ (գգ. Արփի, Ելփին, Չիվա, Արենի, Հեր-հեր, Մարտիրոս և այլն), Սյունիքի մարզ (գգ. Խնձորեսկ, Նյուվադի, քք. Մեղրի և Գորիս), Տավուշի և Լոռու մարզեր:

Ապրելավայրերը. Սովորաբար, ապրում և ձմեռում են քարանձավներում և անձավներում, հազվադեպ՝ տարբեր շինությունների նկուղներում և ձեղնահարկերում: Գերադասում են բնակվել նոսրանտառներում, ջրավազաններին մոտ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Երբեք մեծ գաղութներ չեն առաջացնում, ավելի հաճախ ապրում են անհատորեն կամ փոքր խմբերով (2-7 առանձնյակ): Ակտիվ են օրվա բոլոր մութ ժամերին: Էգը մայիսի վերջին-հունիսի սկզբին ծնում է մեկ, հազվադեպ՝ երկու ձագ: Ձմռանն անցնում են ավելի խոր և համեմատաբար տաք թաքստոցներ: Սնվում են ճանճերով, մոծակներով, մանր թիթեռներով և բզեզներով:

• **Գորշ ականջեղ, Plecotus auritus L.,** 1758 Կարգ՝ ՁԵՌՔԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA Ընտանիք՝ Հարթաքթայիններ, Vespertilionidae

Կարգավիճակը: Սակավաթիվ տեսակ է թվաքանակի կրճատման միտումով: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1a:

Տարածվածությունը: Հարավային Եվրոպա և Սիբիր, Մանչժուրիա, Հյուսիսային Մոնղոլիա, Ալթայ, Անդրկովկաս:

Տարածվածությունը Հայաստանում: Հանրապետության հյուսիսային և հյուսիս- արևելյան շրջանները:

Ապրելավայրերը. Բնակվում են տարբեր շինությունների նկուղներում և ձեղնահարկերում: Սրանց կարելի է հանդիպել նաև ծառերի փչակներում, ժայռերի ճեղքերում՝ մինչև 2450 մ ծ.մ.բ. բարձրությունում: Գերադասում են լեռնատափաստա- նային, անտառատափաստանային և անտառային բացատները ջրավազաններին մոտ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Միասեռ ձմեռող գաղութները կարող են կազմված լինել 170 և ավելի առանձնյակներից: Էգերը երիտասարդ չղջիկների հետ միասին ձմեռում են արուներից առանձնացված: Ակտիվ են գիշերը: թռիչքը սավառնող է: Էգը հունիսի կեսերին ծնում է մեկ, հազվադեպ՝ երկու ձագ: Սնվում են մանր թեփուկաթևավորներով, մոծակներով, հաճախ հավաքում է թրթուրներ և մանր թիթեռներ ծառերի ու թփերի ճյուղերից:

• **Ծալքաշուրթ լայնականջ չղջիկ, Tadarida teniotis Rafinesque,** 1819 Կարգ՝

ՁԵՌՔԱԹԵՎԱՎՈՐՆԵՐ, CHIROPTERA Ընտանիք՝ Բուլդոգայիններ, Molossidae Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Տվյալների անբավարարություն» կատեգորիա ՝ DD:

<u>Տարածվածությունը:</u> Ամենուրեք հազվադեպ: Այս տեսակի առանձին առանձնյակներ նշվել են Աֆրիկայի մերձարևադարձային շրջաններում, Եվրոպայում, Ասիայում, կովկասում, Անդրկովկասում լեռնային Ղարաբաղում, Իրանում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հայաստանը, ամենայն հավանականությամբ, արեալի արևմտյան սայմանն է: 1974-1975 թթ.-ին այն նկատվել է Տավուշի մարզում (Բերդ, Ենոքավան, Պապանինո), իսկ 2004 թ.-ին՝ Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին, Լեռնային Ղարաբաղի սահմանին մոտ:

<u>Ապրելավայրերը.</u> Գերադասում է անտառային հատվածները ջրավազաններին մոտ: Զբաղեցնում է ծառերի փչակները, ժայռերի ճեղքերը և ծառերի անջատված կեղևի տակ դատարկությունները: <u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Բավարար չափով ուսումնասիրված չէ: Էգերը հունիսին ծնում են մեկ ձագ: Կարող են թռչել ծառերի սաղարթների վրայով, նույնիսկ մինչև արևի մայր մտնելը, և դրանց կարելի է շփոթել ջրածիծառների հետ: Բազմաքանակ գաղութներ չեն առաջացնում, ավելի հաճախ ձևավորում են 2-6 առանձնյակներից կազմված խմբեր:

• **Գորշ արջ, Ursus arctos Linnaeus,**1758 Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, CARNIVORA Ընտանիք՝ Արջեր, Ursidae

<u>Կարգավիճակը:</u> Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Գրանցված է եղել նաև ԲՊՄՄ Կարմիր ցուցակում, սակայն 1972 թ.-ից հետո՝ որպես անորոշ կարգաբանական ձև, հանվել է: Ներկայումս տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1 b(iii):

<u>Տարածվածությունը:</u> Շատ մեծ արեալ (Եվրասիա և Հյուսիսային Ամերիկա) ունեցող տեսակ է:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հանդիպում է Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Լոռու, Կոտայքի և Գեղարքունիկի մարզերում: Երբեմն կարող է մտնել Շիրակի և Արագածոտնի մարզեր: Գրանցվել է 400-500 մինչև 3000 մ ծ.մ. բարձրություններում:

<u>Ապրելավայրերը.</u> Բնակվում է չորային նոսրանտառներում, սաղարթավոր անտառներում, լեռնային մարգագետնա-տափաստաններում, ենթալպյան և

ալպիական մարգագետիններում: Արեալը զգալի չափով ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է: Երբեմն արջերը հարձակվում են վայրի կաթնասունների, ավելի հազվադեպ՝ ընտանի կենդանիների վրա:

<u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Բազմանում են մայիսին: Հղիությունը տևում է մոտ 7 ամիս: Ձագերը (առավել հաճախ՝ 2, հազվադեպ՝ 1 կամ 3-4) ծնվում են բնում դեկտեմբերի վերջից մինչև մարտ: Լավ բազմանում է անազատ պայմաններում:

- **Խայտաքիս, Vormela peregusna** (Guldenstaedt, 1770) Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, CARNIVORA Ընտանիք՝ Կզաքիսներ, Mustelidae <u>Կարգավիճակը:</u> Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Vulnerable A2c» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU A2c+B1 b(iii):

<u>Տարածվածությունը:</u> Տեսակը տարածված է Հարավ-Արևելյան Եվրոպայից մինչև Մերձավոր Արևելք, Հարավային Չինաստան և Մոնղոլիա:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հանդիպում է Հայաստանի համարյա բոլոր շրջաններում, 1000-2000 մ ծ.մ. բարձրություններում: Արեալը և էկոլոգիան բոլորովին ուսումնասիրված չեն:

<u>Ապրելավայրերը.</u> Կիսաանապատներ, լեռնային չոր տափաստաններ, լեռնային մարգագետնատափաստաններ և ենթալպիան մարգագետիններ: Արեալը կապված է խայտաքիսի հիմնական կեր հանդիսացող՝ կրծողների տարածման շրջանների հետ: <u>Կենսաբանության առանձնահատկությունները:</u> Բազմանում են, հավանաբար, ձմռան վերջում: Հղիությունը տևում է մոտ 2 ամիս, որից հետո՝ ապրիլ-մայիսին, ծնվում են 4-8 ձագեր: Լավ բազմանում է անազատ պայմաններում:

- **Ջրասամույր, Lutra lutra** (Linnaeus,1758) Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, CARNIVORA Ընտանիք՝ Կզաքիսներ, Mustelidae

<u>Կարգավիճակը:</u> Գրանցված է նախկին ԽՍՀՄ-ի Կարմիր գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Վտանգված»՝ EN D:

<u>Տարածվածությունը:</u> Տեսակը տարածված է Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

<u>Տարածվածությունը Հայաստանում:</u> Հանդիպում է Հայաստանի համարյա բոլոր շրջաններում:

<u>Ապրելավայրերը.</u> Մաքուր ջրով և ձկնապաշարներով հարուստ լճեր, գետեր և գետակներ:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բազմացումը սկսվում է ձմռանը- գարնանը: Ունենում են 1-5, ավելի հաճախ՝ 2-3 ձագեր, որոնք հիմնականում ծնվում են երկու տարին մեկ անգամ:

• **Անտառակատու, Felis silvestris Schreber,** 1777 Կարգ՝ ԳԻՇԱՏԻՉՆԵՐ, CARNIVORA Ընտանիք՝ Կատվազգիներ, Felidae Ենթատեսակ՝ Եվրոպական անտառակատու, Felis silvestris silvestris Schreber, 1775 Կարգավիճակը: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab(iii):

Տարածվածությունը: Ենթատեսակը տարածված է Եվրոպայում, իսկ տեսակը՝ Եվրոպայում, Ասիայում և Աֆրիկայում:

Տարածվածությունը Հայաստանում: Հանդիպում է Արարատի, Վայոց Ձորի, Սյունիքի, Տավուշի, Լոռու մարզերում, 700-2500 մ ծ.մ.բ. բարձրություններում: Հավանաբար, մտնում է նաև Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր: Ապրելավայրերը. Սաղարթավոր անտառներ, չորային նոսրանտառներ: Հիմնական պայմանը՝ ապրելավայրում կերային բազայի (կրծողներ, թռչուններ) առատությունն է և խուլ, մարդու ազդեցությունից զուրկ տեղամասերի առկայությունը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Բազմացումը սկսվում է փետրվար-մարտին: Ապրիլ-մայիսին ունենում են 3-8, ավելի հաճախ՝ 4-5 ձագեր: Հեշտությամբ բազմացվում են անազատ պայմաններում:

• 53. Ազնվացեղ եղջերու, Cervus elaphus Linnaeus, 1758 Կարգ՝ ԶՈՒՅԳՍՄԲԱԿԱՎՈՐՆԵՐ, ARTIODACTILA Ընտանիք՝ Եղջերուներ, Cervidae Ենթատեսակ՝ Կովկասյան ազնվացեղ եղջերու, մարալ, Cervus elaphus maral Gray, 1840

Կարգավիճակը: Տեսակը և ենթատեսակը ընդգրկված չեն ԲՊՄՄ Կարմիր ցուցակում: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Կրիտիկական վիճակում գտնվող»՝ CR D:

Տարածվածությունը: Ենթատեսակն հանդիպում է Կովկասի, Փոքր Ասիայի և Հյուսիսային Իրանի լեռնային անտառներում: Տարածվածությունը Հայաստանում: Արդեն 1954 թ.-ից ազնվացեղ եղջերուն դիտարկվել է որպես Վրաստանից և Ադրբեջանից հանրապետության տարածք պատահականորեն մտած, իսկ մինչ այդ տեսակը լայնորեն տարածված է եղել Հյուսիսային, Արևելյան և Հարավային Հայաստանի անտառներում: 2005 թ.-ին Մեղրիի լեռնաշղթայի հարավային լանջին, գ. Ընաձորից (նախկին Նյուվադի) վերև հայտնաբերվել են առնվազն 5-10 տարվա վաղեմության եղջուրներ: Չհաստատված տվյալներով՝ մի քանի առանձնյակներ հանդիպում են «Դիլիջան» ազգային պարկում, որոնք այստեղ են անցնում, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանի հյուսիս- արևմտյան

շրջաններից:

Ապրելավայրերը. Լայնատերև լեռնային անտառներ խոտաբուսածածկի առատությամբ և ենթաալպիական մարգագետիններ: Ձմռանն իջնում են նախալեռներ, կամ դեպի հարավային լանջեր, նույնիսկ գիհու նոսրանտառներ և չոր տափաստաններ (Մեղրիի լեռնաշղթա): Էկոլոգիապես ազնվացեղ եղջերուն նման է այծյամին, սակայն սննդի հիմնական մասը կազմում է ծառաթփային կերը:

Կենսաբանության առանձնահատկությունները: Զուգավորումը տեղի է ունենում աշնանը (սեպտեմբեր-հոկտեմբեր), հղիության տևողությունը՝ 249-269 օր: Բծավոր ձագերը (սովորաբար, մեկ, երբեմն՝ երկու) ծնվում են մայիս-հունիսին: Հեշտությամբ բազմացվում է անազատ պայմաններում:

### 8.1.5. Հատուկ պահպանվող տարածքներ

Ըստ 25 սեպտեմբերի 2014 թվականի N 1059-Ա ՀՀ կառավարության որոշման ներկայումս հանրապետությունում գործում են հետևյալ ԲՀՊՏ-ները

ա. 3 պետական արգելոցներ («Խոսրովի անտառ», «Շիկահող» և «Էրեբունի»), որոնք զբաղեցնում են 35 439.6 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 1.19 %-ը,

բ. 4 ազգային պարկեր («Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» և «Արևիկ»), որոնք զբաղեցնում են 236 802.1 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 7.96 %-ը,

գ. 233 բնության հուշարձաններ,

դ. 27 պետական արգելավայրեր, որոնք զբաղեցնում են 114 812.7 հեկտար տարածք կամ Հայաստանի ընդհանուր տարածքի 3.95 %-ը:

### 8.1.6. Պատմության և մշակութային հուշարձաններ:

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման հավելված 8-ի համաձայն Շիրակի մարզի համար ՀՀ պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների՝ Սևքար գյուղի հուշարձանները բերված են ստորև:

Տավուշի մարզի պետական ցուցակը ներառում է ներառում է 1996 հուշարձան՝ 797 պահպանական միավորով:

**ՍԵՎՔԱՐ գյուղ**

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | | | ԱՄՐՈՑ | Ք.ա. 2-1 հազ. | գյուղից 3 կմ հվ-աե, Իջևան-Նոյեմբերյան ճանապարհի աջ կողմում, «Չալի յալ» բլրի վրա | Հ | 1 |
| | 1.1 | | Աշտարակ | Ք.ա. 2-1 հազ. | | Հ | 1.1 |
| | 1. 2 | | Դամբարանադաշտ | Ք.ա. 2-1 հազ. | | Հ | 1.2 |
| 2 | | | ԳԵՐԵԶՄԱՆՈՑ | 18-20 դդ. սկիզբ | գյուղի ամ մասում | Տ | 3 |
| 3 | | | ԳԵՐԵԶՄԱՆՈՑ | 18-20 դդ. | գյուղի հվ-աե եզրին | Տ | 4 |
| | 3.1 | | Հուշարձան Սարգիս Ծովանյանի (Սևքարեցի Սաքո) | 1981 թ. | | Հ | 4.1 |
| | 3.1 | | Տապանաքար զորապետ Հ. Ս. Վարշամյանցի | 20 դ. սկիզբ | | Հ | 4.2 |
| 4 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | 13-18 դդ. | գյուղից 1 կմ հվ, «Խաչի յալ» հանդամասում, բլրի վրա | Հ | 5 |
| | 4.1 | | Եկեղեցի | 16-17 դդ. | | Հ | 5.1 |
| 5 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | 13-17 դդ. | գյուղից 1 կմ ամ, «Քոչա-րանց յալ» հանդամա-սում, սարալանջին | Հ | 6 |
| | 5.1 | | Գերեզմանոց | 13-17 դդ. | գյուղատեղիի հս մասում | Հ | 6.1 |
| 6 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ | 13-17 դդ. | գյուղից 3 կմ հվ, անտառի բացատում | Տ | 7 |
| | 6.1 | | Գերեզմանոց | 13-14 դդ. | գյուղատեղիի ամ եզրին | Տ | 7.1: ենթակայու-թյամբ ներկայաց-ված է 1 հուշարձան (7.1.1) |
| | 6.2 | | Եկեղեցի | միջնադար | | Տ | 7.2 |
| 7 | | | ԳՅՈՒՂԱՏԵՂԻ «ԴԱՐՊԱՍ» | 14-18 դդ. | գյուղից 3 կմ ամ, անտառում | Հ | 8 |
| | 7.1 | | Եկեղեցի «Դարպաս» | 16-17 դդ. | գյուղատեղիի աե եզրին | Հ | 8.1 |
| 8 | | | ԽԱՉՔԱՐ ԹԵՎԱՎՈՐ | 12-13 դդ. | գյուղից 1.5 կմ հս-ամ, Դարպաս գյուղատեղի տանող ճանապարհին | Հ | 10 |
| 9 | | | ԿՈԹՈՂ | 13 դ. | գյուղից 1.5 կմ ամ, Դարպաս գյուղատեղի տանող ճանապարհին | Հ | 11 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| **10** | | | ՅՈՒՇԱՂԲՅՈՒՐ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | 1950 թ. | գյուղի մեջ | Տ | 12 |
| **11** | | | ՅՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ԶՈՀՎԱԾՆԵՐԻՆ | 1965թ. | գյուղի մեջ | Տ | 13 |
| **12** | | | ՅՈՒՇԱՐՁԱՆ 1988 Թ. ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻՆ ԵՎ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐ-ՏԻԿՆԵՐԻՆ | 1995 թ. | գյուղի մեջ, երաժշտա-կան դպրոցի մոտ | Յ | 14 |

### 8.1.7. Բնության հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության ԲՆՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշման Տավուշի մարզում է գտնվում հետևյալ բնության հուշարձանները:

**Երկրաբանական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1 | «Մոլլաքար» ժայռ | Իջևան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, Իջևան-Երևան խճուղու ձախ կողմում |
| 2 | «Անանուն» պլագիոգրանիտներ | Բերդ ավանից 6.5 կմ հվ-արմ, անտառտնտեսության մոտ |
| 3 | «Անանուն» դայկայանման մարմիններ | Տավուշի մարզ, Բերդ ավանի հս-արմ եզրին |
| 4 | «Անանուն» փոխակերպարային (մետամորֆիզացված) թերթաքարեր | Վարագաձոր գետի վերին հոսանքում, Բերդ քաղաքից մոտ 20 կմ հվ-արմ |
| 5 | «Կալաքար» լեռ | Ծաղկավան գյուղից 1.5 կմ հվ |
| 6 | «Անանուն» սյունաձև էքստրուզիվ մարմին՝ նեկկ | Ծաղկավան գյուղից 2 կմ հվ |

| | | |
|---|---|---|
| 7 | «Անանուն» դայկայանման մարմիններ | Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի ձախ վտակի հովտում |
| 8 | «Փայտասար» քարանձավների համալիր | Կողբ գյուղից 4 կմ հարավ |
| 9 | «Անանուն» կվարցային դիորիտներ և գաբրոդիորիտներ | Նավուր գյուղից 1.5 կմ հվ-արլ, Տավուշ գետի կիրճի աջ լանջին |
| 10 | «Անանուն» շերտագրական մերկացում | Չինչին գյուղի հվ-արլ եզրին |
| 11 | «Անանուն» սանդղափուլ քարափներ | Չինչին գյուղից 2.0 կմ հվ-արմ |
| 12 | Օձաքար» լեռնագագաթ | Պառավաքար գյուղից 3 կմ հս-արմ, Վաղաշեն տանող ճանապարհի աջ կողմում |

**Պետական արգելավայր**

| | | |
|---|---|---|
| 1 | Ախնաբադի կենու պուրակ | Միափորի լեռնաշղթայի Ծաղկոտ լեռնաբազուկի վրա, Աղավնավանք գյուղի մոտ, Ախնաբադի եկեղեցու հարևանությամբ, ծովի մակարդակից1400- 1700 մ բարձրության վրա |
| 2 | Արջատխլենու արգելավայր | Իջևանի լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջեր, Խաղաղաղբյուր գետի ավազան, ծովի մակարդակից 1500- 1800 մ բարձրության վրա. |
| 3 | Գանձաքարի արգելավայր | Աղստև գետի աջափնյա վտակ Փայտաջուր գետի ավազան, ծովի մակարդակից 820-890 մ բարձրության վրա. |
| 4 | Զիկատարի արգելավայր | Գուգարաց լեռնաշղթայի Զիկատար լեռնագագաթի հյուսիս-արևելյան լանջեր, ծովի մակարդակից 1250- 1650 մ բարձրության վրա. |
| 5 | Իջևանի արգելավայր | Աղստև գետի ավազանում, Իջևանի և Կայենի լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 900- 2100 մ բարձրության վրա. |

**Կենսաբանական հուշարձաններ**

| | | |
|---|---|---|
| 1 | «Նոյեմբերյանի սոսի» | քաղ. Նոյեմբերյան, Չինարաձորում |
| 2 | «Վարդան Մամիկոնյանի կաղնի» | գ. Ակնաղբյուր, ծ.մ-ից 900 մ բարձրության վրա |
| 3 | «Սարի գյուղի սոսի» | գ. Սարիգյուղ, ԵրևանՆոյեմբերյան ճանապարհից աջ, ծ.մ-ից 750 մ բարձրության վրա |
| 4 | «Գետահովիտի մամռապատ ժայռ» | Գետահովիտ գյուղի մոտ, Սառնաջուր գետի ձախ ափին, մոտ 700-800 մ բարձրության վրա |
| 5 | «Տանձուտ» | Աղավնավանք գյուղի մոտ |

**Ազգային պարկ**

| | | |
|---|---|---|
| 1 | «Դիլիջան» ազգային պարկ | Գտնվում է Փամբակի, Հալաբի, Մուրղուզի, Իջևանի, Արեգունու լեռնաշղթաների վրա, մակերեսը 33.765 հա է, որից անտառածածկ է 25.955 հա: |

### 8.1.8. Սոցիալ-տնտեսական բնութագիրը

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը: 2023թ. Տավուշի մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 1.3 %,
- գյուղատնտեսություն 5.0 %,
- շինարարություն 3.0 %,
- մանրածախ առևտուր 2.2 %,
- ծառայություններ 0.9 %:

Մարզը ՀՀ վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ոլորտներ են համարվում խոշոր եղջերավոր

անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությոնը: Վերջին տարիներին զարգացում է ապրում պտղաբուծությունը, ինչով մարզը նախկինում մեծ համբավ է վայելել: Վերջին տարիներին հիմնվել են պտղատու այգիներ, որոնց մեջ գերակշռում են թուզն ու արքայանարինջը: Տարեցտարի զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը: Մարզի տնտեսության առաջատար ոլորտը մշակող արդյունաբերությունն է: Առավել գերակշռող են սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը: Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիներ, պահածոներ, հանքային ջուր, քարե և փայտե, վերջերս նաև տեքստիլ արտադրատեսակներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով: Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս–Թբիլիսի-Երևան գազատարը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է ԵրևանԹբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

Մարզի ընդհանուր մակերեսի 51%-ը զբաղեցնում են խառը անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ, բնական ժառանգության անզուգական հուշարձաններով: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծվել է Դիլիջանի ազգային պարկը և Իջևանի անտառային այգին՝ դենդրոպարկը: Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգնման և միջազգային տուրիզմի ծավալման համար:

Ըստ Հայաստանի 2011թ. մարդահամարի արդյունքների՝ Սևքարի մշտական բնակչությունը կազմել է 2193, առկա բնակչությունը՝ 1929 մարդ:

## 9. Շինարարության ընթացքում իրականացվող գործունեություն նպատակը, բնութագիրը և տեխնիկականտեխնոլոգիական լուծումները

Շինարարությունն իրականացվելու է երկու փուլով, առաջին փուլի ընթացքում իրականացվելու են հողային աշխատանքներ էքսկավատորով, այնուհետև կառուցապատման աշխատանքները:

### 9.1. Քանդման փուլ.

Գոյություն ունեցող դպրոցային համալիրը պահպանվելու է և քանդման ենթակա չէ: Նոր կառուցվող դպրոցի մասնաշենքը տեղադրված է նոր հատկացված տարածքի սահմաններում: Իսկ բաց մարզադաշտը տեղադրված է գոյություն ունեցող դպրոցի տարածքում:

Առաջացած աղբը և ավելորդ գրունտը տեղափոխվելու է շին հրապարակից 4.0կմ հեռավորության վրա՝ ըստ Տավուշի մարզի Իջևանի համայնքապետարանից տրված տեղեկանքի (հավելված 1):

### 9.2 Շինարարության փուլ.

Շինհրապարակում նախատեսվում է հետևյալ աշխատանքները.

Շինարարական հրապարակի կազմակերպում, շինհրապարակի կազմակերման նախագիծը պատկերված է հավելված 9-ում:

Շին աշխատանքների կազմակերպման հերթականությունը հետևյալ հերթականությամբ է իրականացվելու

1. Շին. հրապարակի պատրաստում
2. Ժամանակավոր շին. աշխատանքների կարգավորման ճանապարհային նշանների տեղադրում
3. Ժամանակավոր շինությունների տեղադրում
4. Շինության փոսորակի իրականացում
5. Հիմքերի կառուցում, տեղադրում
6. Շինմոնտաժային աշխատանքների իրականացում
7. Հարդարման աշխատանքների իրականացում
8. Ինժեներատեխնիկական աշխատանքների իրականացում
9. Բարեկարգման աշխատանքների իրականացում
10. Լուսավորության համակարգի կառուցում
11. Ժամանակավոր շինությունների հեռացում շին. հրապարակից

Շին. հրապարակում նախատեսվում են.

- ✓ ժամանակավոր գրասենյակ, որտեղ առկա է նաև առաջնային բուժ. օգնության պարագաներ

- ✓ Շին. Նյութերի պահեստ
- ✓ Պահակակետ, որտեղ առկա է հակահրդեհային պարագաներ
- ✓ Գործիքների ժամանակավոր պահեստ
- ✓ Ավտոլվացման կետ
- ✓ Զուգարան, ցնուղարան
- ✓ Բանվորների տնակ-հանդերձարան
- ✓ Իներտ նյութերի պահեստ

Շինհրապարակում լինելու են նաև 1 հատ 7,30x3մ չափերի ավտոմեքենաների անիվների լվացման հարթակ, որին կից տեղադրվելու է հեղուկ նյութերի արտահոսքի յուղորսիչ, ինչպես նաև հետադարձ ջրամատակարարումով պոմպ: Շինհրապարակն ապահոված է լինելու գիշերային լուսավորությամբ և լուսային ազդանշանային համակարգով: Ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, նախատեսվում է տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով և շին. հրապարակում ծածկել անթափանց թաղանթներով:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածքը:

**Շինհրապարակի կազմակերպման հատակագիծը**

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վագոն տնակներում: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա խողովակներով, բակային սելավային ջրացանցի միջոցով հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող 0,84մ$^3$ չափերի պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում: Պարզեցված ջուրը կօգտագործվի շինարարական աշխատանքների ժամանակ արտադրական հրապարակի ջրցանման և անիվների լվացման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ: Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղաթիթեղով ցանկապատ: Տեղադրվելու է 3-5,0մ լայնությամբ 1 դարպաս: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ: Շինհրապարակն ապահոված է լինելու՝ հակահրդեհային վահանակով, կենցաղային աղբամաններով, էլեկտրականությամբ, գիշերային լուսավորությամբ: Շինհրապարակում նախատեսված է քանդած շինանյութի կուտակման, զտած շինանյութի տեղադրման, ինչպես նաև շինարարական աղբի կուտակման տարածքներ: Բոլոր

տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները: Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ, հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ (հավելված 5):

**Հողային աշխատանքներ.**

Կառուցապատման ժամանակ կատարվելու են հետևյալ ծավալի հողային աշխատանքներ՝

հողային աշխատանքներ՝ հանույթ՝ 9152մ $^{3}$

ետ լիցք՝ 7314,3մ$^{3}$ :

ներառյալ մասնաշենքերի հիմքերի համար փոսորակի փորման, ներտարածքային ճանապարհների կառուցման, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքները կատարվելու են մեքենա-մեխանիզմներով և ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներով: Յուրաքանչյուր 50սմ հաստությամբ շերտով ետլիցքից հետո կատարվելու է գրունտի չոր և թաց տոփանում: Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև կրող և պատող կոնստրուկցիաների շին մոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան: Հողային աշխատանքների հանույթի ժամանակ առաջացած գրունտը տեղափոխվում է պահեստային տարածք՝ համայնքապետարանի կողմից հատկացված և ետլիցքի համար հետ է բերվում անհրաժեշտ քանակությունը:

**Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ.** գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

Շինհրապարակում նախատեսվում է

ավտոկռունկ՝ 1 հատ

էքսկավատորներ՝ 1 հատ

ավտոինքնաթափ մեքենա՝ 2 հատ

Նշված տեխնիկան որպես վառելիք օգտագործում է դիզ. վառելիք, որի արդյունքում մթնոլորտ է արտանետվում հիմնականում ածխաթթու գազ:

Օգտագործվելու են նաև ամբարձիչ, տրակտոր, բետոնախառնիչ, բետոնամղիչ պոմպ, եռակցման ապարատ, ձեռքի կտրող, հատող ժամանակակից գործիքներ, ձեռքի տոփանիչ և այլն: Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները,

բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5$^0$ -ից ոչ ավել թեքություն: Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան, կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ շինհրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով: Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում: Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

**Էլեկտրամատակարարում.** դպրոցի շինարարության ընթացքում լինելու է ժամանակավոր էլեկտրամատակարարում: Էլեկտրամատակարարումը կատարվելու է համաձայն՝ «ՀԷՑ» ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի՝ մոտակա էլեկտրական ենթակայանից, տեղադրելով առանձին հաշվիչ: Ժամանակավոր էլեկտրամատակարարումը իրականացվելու է գործող դպրոցի տարածքից: Համաձայն էլեկտրակայանքների տեղափոխման տեխնիկական պայմանի՝ դպրոցի տարածքում առկա գոյություն ունեցող օդային գծերը ապամոնտաժվում են և նախատեսվում է կառուցել նոր ստորգետնյա մալուխային գծեր:

**Ջրամատակարարում և ջրահեռացում.** Շինարարության փուլում նախատեսվում է ժամանակավոր ջրագծի անցկացում՝ գործող դպրոցի ջրագծից:

Շինարարության փուլում աշխատողների կենցաղային կարիքների հոգալու նպատակով տեղադրվելու է բիոզուգարան՝ լվացարանով:

**Հրդեհաշիջման համակարգ.** շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

**Շինաղբի կուտակումը** կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ, չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Կատարվելու է առաջացած թափոնների տեսակավորում:

Կենցաղային աղբը կառուցապատման փուլում կազմելու է 4320կգ/տարի: Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 1.5*1 չափերի 2 աղբարկղ: Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվությամբ սահմանված պահանջին համապատասխան: Շինաղբի հեռացումը ըստ Իջևան համայնքի գրության հեռացվելու է աղբավայր՝ 4,0կմ հեռավորության վրա:

**Բարեկարգում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Բարեկարգումը կատարվելու է սալիկներով, սալվածքների, թեքահարթակներ, եզրաքարերի տեղադրմամբ:

**Կանաչապատում.** Տնկվելու են նոր ծառեր և թփուտներ, հացենի արևելյան 15 հատ, սոճի կովկասյան 25 հատ, գիհի կազակական 47 հատ, հնարավորության դեպքում տեղափոխվող կամ հատվող ծառեր՝ 9 հատ: Կանաչապատումը իրականացվելու է Իջևանի համայնքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման և գլխավոր հատակագծի համաձայն, հավելված 4:

### 9.2.1 Շինարարության իրականացման ժամանակացույցը

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 670օր:

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է համաձայն (N 596-Ն 19.03.2015թ. ՀՀ Կառավարության որոշում կետ 111, 113) ՍՆԻՊ 1.04.03-85* մաս II հիման վրա, հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրը, ընդհանուր մակերեսը: Շինաշխատանքների իրականացման ժամանակ սահմանազատվելու է շինհրապարակը, կատարվելու են կրթահամալիրի կառուցման աշխատանքները, իրականացվելու է բարեկարգման աշխատանքները: Շինարարական աշխատանքների ժամանակացույցը բերված է հավելված 5-ում:

## 10. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Դպրոցական շենքի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային և ոռոգման նպատակով և հոսանք:

## 10.1 Ջուր.

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի (գրունտի) խոնավեցման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար: Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է կից ճանապարհով անցնող համայնքային գոյություն ունեցող ջրագիծը՝ անցակացվելու է ժամանակավոր ջրագիծ: Ջրցանի համար օգտագործվող ջուրը կապահովվի առկա ջրատարից: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝ WË.ï. = (n x N + n1 x N1) x T,

որտեղ n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 3 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ$^3$ օր/մարդ. n1– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ մոտավոր 20 մարդ

N1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է ՝ 0.025մ$^3$ օր/մարդ. T – աշխատանքային օրերի թիվն է՝ 670 օր:

Wխ.տ.= (3 x 0.016 + 20 x 0.025) x 670 = 367.16 մ $^3$ /շին. ժամ:

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝ Մ1 = S1 x K1 x T, որտեղ՝ S1 – ջրվող տարածքի մակերեսը 7761մ$^2$, (շինհրապարակ, ճանապարհներ)

K1 – 1 մ $^2$ օրական ջրցանի նորմը, 0.0015մ$^3$,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 250 (առավելագույնը 250օր, ներառված կրկնակի ջրցանը) Մ1 = 7761 x 0.0015 x 250=2910.4մ$^3$:

**Կաթսայատուն:**

Նախատեսվում է կառուցել նոր կաթսայատուն, որտեղ տեղադրվում են երկու ջրատաքացուցիչ կաթսաներ՝ յուրաքանչյուրը 650կՎտ հզորությամբ, հաշվի առնելով հաշվարկային ծախսը 637 ԿՎտ/ժ. Գազի ծախսը՝ 71մ$^3$, ծխահեռացման խողովակ՝ մետաղական 426մմ տրամագծով:

Կաթսայատանը տեղակայված են կաթսաները, թաղանթային ընդարձակիչ անոթը,պոմպերը, կոլեկտորները:

**Կեղտաջրեր.** շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տեղադրվող 1*1,5 չափերի սանհանգույցից՝ բիոզուգարանից: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով: Ջրահեռացման համար նախատեսվում է հորի կառուցում:

**Շինարարության** ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- երկաթբետոն, երկաթբետոնե կարկասներ
- կախովի ցեմենտի պանելներ
- ֆիբրոցեմենտ
- փայտ
- մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ամրանային ձողեր
- բարձրորակ երեսապատման սալիկներ, բետոն, պեմզաբլոկ
- ապակի

Կառույցի երեսապատումը նախատեսվում է իրականացնել ավտոկլավինացված ֆիբրոցեմենտային 8 մմ հաստությամբ սալերով գործարանային ներկածածկույթով և բազալտե երեսապատման սալիկներով: Պատուհանները լինելու են ալյումինե, ջերմ. կամրջակով, երկշերտ ապակեփաթեթով: Աստիճանները՝ երեսապատվելու են բազալտե սալիկներով, հատակը մետլախային խեցեսալիկներով և վինիլներով: Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչով: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով: Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինինդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում: Շինհրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

**Շահագործման փուլ.**

Դպրոցի նախագծային լուծումներում ներառվել են դպրոցի տարրական, միջին և ավագ դպրոցների հոսքերը, սպորտային և բազմաֆունկցիոնալ դահլիճները, վարչական մասնաշենքերը, բացօթյա մարզահրապարակը և խաղահրապարակը:

Շահագործման փուլում հրդեհաշիջման համար պահանջվող ջրի ելքը հաշվարկվել է համաձայն «Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» ՀՀՇՆ.40-01.01-2014 նորմերի:

Շահագործման ընթացքում 432 աշակերտների տեղով դպրոցի համար պահանջվող ջրի ծախսը հաշվարկվում է հետևյալ կերպ.

ՍԵՎՔԱՐ

**Հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ.40-01.01-2014**

1. U=482 սովորող և ուսուցիչ

2.Սանիտարական սարքավորումների

քանակը N = 105

Մաքսիմում (տեղային) վայրկյանային ջրի ծախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով:

q=5x $q_{0x}$ a, որտեղ $q_0$ սանիտարական սարքերի ջրի ծախսի նորման է, համաձայն

**ՀՀՇՆ.40-01.01-2014** հավելված – 3-ի $q_0$=0.14 լ/վրկ

a –ն որոշվում է P x N-ից

P=$q_{hru}$U / $q_o$N 3600 $q_{hr\,u}$ ժամային առավելագույն ջրի ծախսը:

Համաձայն հավելված – 3 ընդունվում է -3.1

P= 3.1x482/ 0.14x105x3600 = 0.0282

NxP= 105x 0.0282=2,961 a – ի արժեքը համաձայն հավելված -4.2-ի կլինի a=1,81

Q= 5x0.14x1,81=1.267 L/վրկ

Ժամային ծախսը

$q_{ohr}$ Համաձայն հավելված – 3 ընդունվում է -100

Phr=3600P$q_o$/ $q_{ohr}$ = 3600x0.0282x0,14/100=0,142

a – ի արժեքը համաձայն հավելված -4.1-ի կլինի a=5,5

Qhr= 0.005x100x5.5.=2,75 մ3/ժամ

Օրվա ծախսը – 482x14,0= 6,75 խմ/օր

Դպրոցի շենքի կենցաղային և խմելու ջրամատակարարում-1,3լ/վ
Կաթսայատուն -- 0,3լ/վրկ
ԸՆԴԱՄԵՆԸ --------------------- 1,6լ/վ
2,75 մ3/ժամ

Հակահրդեհային նպատակներ ծորակներով – 2x2.5=5լ/վրկ

Կենցաղային կոյուղի ------- 1,6+1.6= 3.2 լ/վրկ

Դպրոցի սպորտային հրապարակները լինելու են ռետինե ծածկույթով: Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝

ՀՀՇՆII8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների, ինչպես նաև փոշեհատիկային հրդեհաշիջման մոդուլների տեխնիկական անձնագրերի հիման վրա: Շենքն ապահովված է լինելու ձայնամեկուսացման, ջերմամեկուսացման, օդափոխության և ավտոմատ հրդեհային ազդարարման համակարգերով՝ ծխի և ջերմային ազդանշանային ընդունող-հսկիչ սարքերով, լուսաձայնային-ազդանշանային ազդասարքերով, հրշեջ-փրկարարական մեքենաների մոտեցման ուղիներով: Շահագործման փուլում շենքն ապահոված է լինելու նաև բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգը սահմանելու մասին» N426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան: Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

1) ջեռուցման համակարգերին.
2) տաք ջրամատակարարման համակարգերին.
3) օդի լավորակման համակարգերին.
4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը
5) լուսավորության համակարգերին

Դպրոցի աստիճանավանդակները լինելու են բազալտե սալվածքներով, դահլիճը՝ լամինատե ծածկույթով:

**Ջերմամատակարարում.** Շենքի ջերմամատակարարումը նախատեսված է՝ ջեռուցման միջոցով՝ ջրային երկխողովականի ջրի մեխանիկական շրջանառությամբ ալյումինե ռադիատորներ:

Ջեռուցման սարքերի ջերմատվությունը կարգավորելու համար նախատեսված են ջերմակարգավորիչ փականներ մատակարարի վրա, իսկ հետադարձի վրա՝ փակող փականներ: Սենյակների օդի ջերմաստիճանները լինելու են համաձայն գործող նորմերի: Մոնտաժումից հետո ամբողջ համակարգը ենթարկվելու է հիդրավլիկ փորձարկման, որից հետո կատարում են խողովակների փչամաքրում:

Էլեկտրասնուցման արտաքին ցանցերի իրականացումը կատարվում է անմիջապես ՀԷՑ ՓԲԸ-ի կողմից, որոնք ներկայումս ապահովում են գոյություն ունեցող դպրոցի կարիքները: Ջեռուցման, օդափոխության և էլեկտրամատակարման նախագծերը իրականացվել են համաձայն ՀՀ-ում գործող նորմաների և կանոնների:

***Հակահրդեհային անվտանգություն.*** Ավտոմատ հրդեհային համակարգը նախատեսված է հսկվող շինություններում հրդեհի հայտնաբերման և համապատասխան ծառայություն տեղեկացման համար:

Համակարգը բաղկացած է հսկիչ-ընդունիչ սարքից՝ РУБЕЖ-2ОП մակնիշի /2 օղակ, ամեն օղակին մինչև 250 հասցեային տվիչներ և այլ հասցեային սարքավորումներ միացնելու հնարավորությամբ/: Վահանակին միացվում են հասցեային օպտիկական ազդասարքերը, հասցեային ծխի գծային ազդասարքերը, հասցեային հրդեհի՝ ձեռքով գործարկվող ազդարարիչները, հասցեային լուսաձայնային ազդարարիչները, հասցեային ռելեների մոդուլները՝ ահազանգի դեպքում կատարող մեխանիզմներին գործարկելու համար:

Հրդեհի ահազանգման համակարգի ընդունիչ հսկիչ սարքը տեղակայվում է շինության առաջին հարկում գտնվող պահակակետում, որտեղ իրականացվում է շուրջօրյա հերթապահություն: Ընդունիչ հսկիչ սարքը համալրված է նաև ինդիկացիայի մոդուլով, անխափան սնուցման սարքով և ԱԻՆ միանալու վահանակով:

Տվյալ շինությունում բացառությամբ սանհանգույցների և 3մ$^2$ փոքր սենյակների, բոլոր տարածքներում նախատեսված են հասցեային ծխի ազդասարքեր, սպորտդահլիճում, նիստերի դահլիճում և երկրորդ լույսով միջանցքում նախատեսվում են հրդեհի հասցեային գծային ծխի ազդասարքեր, իսկ միջանցքներում, էվակուացիոն ելքերի և աստիճանավանդակների մոտ նախատեսված են հրդեհի՝ ձեռքով գործարկվող կանչի կոճակներ / H=1500մմ/:

Շինության ընդհանուր օգտագործման տարածքներում նախատեսված են լուսաձայնային ազդարարիչներ՝ ահազանգի դեպքում ձայնային ինդիկացիայի համար:

Բոլոր հասցեային տվիչների, շչակների և այլ միավորների միացումը հասցեային օղակին կատարվում են КПСнг - FRLS 1x2x0.75 այրում չտարածող մալուխներով և նրանց սնումը կատարվում է հասցեային օղակից: Համաձայն գործող նորմերի հրդեհի ահազանգման համակարգի էլեկտրասնուցումը հուսալիության տեսանկյունից վերագրվում է 1-ին կատեգորիայի: Այդ պատճառով էլեկտրասնուցումը կազմակերպվում է անխափան սնուցման աղբյուրներից:

Հիմնական սնուցումը 220Վ 50Հց

Պահուստային սնուցումը՝ 2 հատ մարտկոցներից՝ 12Վ 12Ա: Շենքում նախատեսված է հրդեհամարման համակարգ համաձայն ՀՀՇՆ 40-01.01-2014-ի պահանջի՝ 2 շիթ 2.5լ/վրկ ելքով: Հրդեհամարման համակարգը մոնտաժվում է պողպատյա էլ-եռակցման Ø76x3մմ և Ø57x3մմ տրամագծով պողպատյա էլ եռակցման խողովակներից: Հրշեջ պահարանները համալրված են հրշեջ

ծորակներով և l=20.0մ երկարության փողրակներով: Տարածքում նախատեսվում է տեղադրել 2 հատ հակահրդեհային ռեզերվուարներ, յուրաքանչյուրը՝ 100մ$^3$:

**Օդափոխություն.** Դպրոցում նախատեսված է ընդհանուր օդափոխության ներածման և արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ: էներգոարդյունավետության նպատակով նախատեսված են ներածման-արտածման սարքեր ռեկուպերատորով

Քիմիայի դասարանի արտածման պահարանից նախատեսված է մեխանիկական դրդմամբ արտածում: Արտածված օդը կոմպենսացնելու համար նախատեսված է ներածում միջանցքից, որը ապահովելու համար նախատեսված է ներածման դրոսել փական էլ. շարժաբերով: Փականը բլոկված է արտածման օդափոխիչի հետ: Սան հանգույցներից կազմակերպված են արտածման համակարգեր մեխանիկական դրդմամբ: Ապաստարանի ներածման սարքը տաքացնում է օդը էլ. եղանակով և միացված է էլ. գեներատորին: Ներածման բոլոր օդատարները, ինչպես նաև ռեկուպերացիոն համակարգերի արտածման օդատարները մեկուսացվում են 10մմ հաստությամբ մեկուսիչներով: Օդատարները ընդունված են ցինկապատ պողպատից:

**Կենցաղային կոյուղի**

Կենցաղային կոյուղու ցանցը համակցված է: Շինության վերգետնյա հատվածի կոյուղին ինքնահոս հեռանում է բակային ցանց, իսկ նկուղային հարկում նախատեսված սանհագույցների կոյուղին բակային ցանցի է միանում կոյուղու ճնշումային սարքավորման օգնությամբ (Կոյուղու ճնշումային սարքավորում: Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով:

Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանցի մեջ և համաձայն տեխնիկական պայմանների թափվում են օբյեկտում նախատեսված կոյուղու մաքրման կայան, որտեղից վարակազերծված և մաքրված ջուրը հեռացվում է դեպի ցամաքուրդային հոր, որը ուղղահայաց փորվածք է, օգտագործվում է մակերևույթին, ոռոգման, երբեմն նաև կոյուղու ջրերը կլանելու և ստորերկրյա ճանապարհով հեռացնելու համար: Արտաքին ներտարածքային ցանցը անցկացվում է պոլիէթիլենային ծալքավոր կոյուղու խողովակներից: Մաքրման կայանի հզորությունն է 15մ$^3$/օր:

**Ցանկապատում.** Դպրոցի մասնաշենքերը կառուցելուց հետո տարածքը ցանկապատվելու է 1,40մ բարձրությամբ ճաղաշարով՝ 10սմ բետոնե հիմքի վրա: Ապահովված է լինելու արտաքին լուսավորությամբ՝ հենասյուններով: Ֆուտբոլի դաշտի ցանկապատը 4.2 մ բարձրությամբ՝ 60 սմ բետոնե հիմքով:

**Աղբահեռացում.** Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Իջևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով, շինհրապարակից 4,0կմ հեռավորության վրա: Տեղադրվելու են 4 հատ 1*1,5 չափերի աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

**Բարեկարգում, Կանաչապատում.** Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կառուցապատումից ազատ տարածքի բարեկարգում և կանաչապատում՝ 3963.8մ² մակերեսով: Կանաչապատումն իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ /գեոծածկույթով/՝ համաձայն կանաչապատման նախագծի, Հավելված 4:

**Էներգախնայողություն և էներգաարդյունավետություն.** Շահագործման փուլում դպրոցի շենքն հանձնելուց առաջ կատարվելու է շինության էներգաարդյունավետության համապատասխանության գնահատում, կկիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Զ1 ընթացակարգերի պահանջները,

**Արևային վահանակների տեղադրում:**

Նախագծով նախատեսվում է մինչև 127,6կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգի տեղակայում տանիքում: Արևային ֆոտովոլտային համակարգը կազմված է 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար: Դրանք միանում են փոխակերպիչների ԱՀԿՈՒ 4 մուտքերին, փոխակերպիչների անվանական ելքային հզորությունը 60 կՎտ է /Եռաֆազ/: Տանիքին ՖՎ վահանակները տեղակայվում են ալյումինե կրող հենակառուցվածքի վրա ձգման միջոցով: ՖՎ կրող հենակառուցվածքի բոլոր դետալները և տրամատներն էլեկտրոլիզացված ալյումինից են:

# 11.Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և վնասակար ազդեցությունների բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը

Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ: Դպրոցի շենքը կառուցվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես՝ ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և

գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 30.01-2023թ. «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», ՀՀՇՆ 2024թ «Շինարարական կլիմայաբանություն»:

## 11.1 Օդային ավազան.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով: Օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում՝ պայմանավորված գնահատման հաշվետվությունում նախատեսվող միջոցառումների պարտադիր կատարմամբ:

Հորատման, բեռնման, թափոնակույտման աշխատանքների ընթացքում հողային հանույթից փոշու արտանետումները կարելի է հաշվել ստորև բերված արտահայտությամբ՝

Q = K1 x K2 x K3 X K4 x K5 x K6 x B x G X 106 / 3600, գ/վ

որտեղ՝

K1 –ը փոշու զանգվածային բաժինն է հողային հանույթում, 0.05

K2 –ը՝ փոշու մասնաբաժինը, որը կարող է անցնել աէռոզոլային մասնիկների, 0.02

K3 -ը գործակից է, որը հաշվի է առնում քամու միջին արագությունը (մ/վ), 1.8

K4 –ը գործակից է, որը հաշվի է առնում տարածքի պայմանները, 1

K5 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի խոնավությունը, 0.4

K6 –ը գործակից է, որը հաշվի է առնում հանույթի չափերը, 0.1

B-ն գործակից է, որը հաշվի է առնում հողաթափման բարձրությունը, 0.6

G –ն՝ հողային հանույթի զանգվածն է 1 ժամում, տ/ժ

Հողային աշխատանքների տևողությունը գնահատվում է մոտ 4 ամիս կամ

4 ամիս x 22 օր x 8 ժամ = 704 ժամ/շինարարություն :

Հողային հանույթի ընդհանուր զանգվածը կազմում է 9152մխմ կամ 16474 տ:

32534տ. /704 ժամ=23,4 տ/ժամ

Q=(0.05 x 0.02 x 1.8 x 1 x 0.4 x 0.1 x 0.6 x 23,4x106 )/ 3600 = 0.2976գ/վ

Գումարային փոշու արտանետումները հողային աշխատանքների ժամանակ կկազմի՝

0.2976գ/վ x 704 ժ/շ x 3600 վ /106 = 0.71տ

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ: Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- շինհրապարակը ցանկապատվելու է, կառուցվող շենքը կծածկվի համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

-ավազի շերտերի փռումը և հողի հետլիցքն իրականացնել նախապես թրջված վիճակում,

- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

## 11.2 Հողային ռեսուրսներ.

Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտի մի մասն օգտագործել տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- շինհրապարակն ապահովված կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների

քանակը,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,

- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը: Շահագործման փուլում գործունեությունը հողային ռեսուրսների վրա ազդեցություն չունի:

### 11.3 Ջրային ռեսուրսներ.

Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ: Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու, կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- Օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը, բացառությամբ վերանորոգվող և վերակառուցվող փողոցների, օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս» («Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդված, 4-րդ կետ), որը նպատակ է հետապնդում կանխարգելել փոշեառաջացումը և իրականացնել փոշենստեցում,

-շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթևեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող

սանիհանգույցներից՝ բիոզուգարաններից:

-շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է կապալառու կազմակերպության կողմից:

Շահագործման փուլում դպրոցի ջրամատակարարման համակարգը միացվելու է բնակավայրի գոյություն ունեցող ջրաամբարին: Բնակավայրում բացակայում է կոյուղատարը, ուստի դպրոցի ջրահեռացման համակարգի համար նախատեսվում է կառուցել 15մ$^3$ չափերի ավտոմատացված համակարգով օժտված մաքրման կայան: Կենցաղային հոսքերը սանիտարատեխնիկական և տեխնոլոգիական սարքավորումներից ինքնահոս խողովակներով հեռացվում են նախագծված ներտարածքային արտաքին ցանց և համաձայն տեխնիկական պայմանների թափվում են նախատեսված կոյուղու մաքրման կայան: Մաքրվելուց հետո ջուրն օգտագործվելու է ոռոգման համար, իսկ ավելցուկը միանալու է բնակավայրի հեղեղատարին:

## 11.4 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքը բնակավայրային նշանակության է, տարածքում առկա է բուսականություն՝ մոլախոտերի տեսքով:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

## 11.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են

- Շինարարական տեխնիկայի օգտագործման արդյունքում գոյացած յուղերով աղտոտված ավազ /յուղի պարունակությունը - 15%-ից պակաս/ ծածկագիր՝ 31402303 01 03 4

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (ավազի, բետոնի, քարի և այլն), (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200600 01 00 0)՝ 350 մ$^3$ ծավալով:

Փորման աշխատանքների արդյունքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող՝ 3140110008995 ծածկագրով 1837,7մ$^3$:

Շինարարության փայտանյութի թափոններ՝ այդ թվում՝ շինությունների քանդելուց և մասնատելուց առաջացած՝, ծածկագիր՝ «17120500 01 00 4» թափոնները գնահատվում են երկրորդային օգտագործման համար պիտանի և կօգտագործվեն կապալառուի կողմից:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի

2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

**Կենցաղային աղբի հաշվարկները**

Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ/բացառությամբ խոշոր եզրաչափերի ծածկագիրն է (91200400 01 00 4), վտանգավորության դասը՝ 4:

Կենցաղային աղբի քանակը հաշվարկվում է հետևյալ բանաձևով. M=n*m m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակն է մեկ մարդու հաշվով՝ 120 կգ/տ n – աշխատողների թիվն է M=20*120=2400 կգ/տ կամ 6.6կգ/օր: Շինարարությունը տևելու է 1.8 տարի, հետևաբար M=2400*1.8= 4320կգ/տ կամ 6.45 կգ/օր (670 աշխատանքային օր):

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ պահել թափոնների կուտակումներից,
- շին հրապարակի տարածքում կիստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,
- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,
- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ 1,5x1մ $^3$ չափերի պլաստմասե աղբահավաք տարրողությունների մեջ,
- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,
- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահոված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- բացառել աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում,
- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, հավաքվելու են հատուկ տարրողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 4 հատ 1,5x1մ$^3$ տարրողության պլաստմասե աղբամաններ:

Շինարարական կազմակերպությունների շինմատակարարումն

իրականացվելու է լիցենզավորված կազմակերպությունների կեղմից, խստիվ հետևելով, որ օգտագործվեն էկոլոգիապես մաքուր շինանյութեր:

Կենցաղային աղբի տեղափոխումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով:

## 11.6 Աղմուկ և թրթռում.

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը, իսկ ավարտին գլդոնը: Միաժամանակ այս շինտեխնիկան չի շահագործվում: Երկու աղմուկի աղբյուրները կրում են ժամանակավոր բնույթ: Էքսկավատորի աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 85 դԲ:

Գլդոնի աղմուկի մակարդակը՝ $LA_{էկվ}$, կազմում է 80 դԲ:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝≤ 200կգ/մ²: Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \lg m_{է} - 10 \text{ դԲ}, \text{երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \lg m_{է} - 13 \text{ դԲ}, \text{երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m_{է} = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K –գործակից է , որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200կգ/մ² K=1,3 $m_{է}$= 1,3 x 200=260

$$L_{աղ} = 13 \lg m_{է} - 13 = 18,2 \text{ դԲ}$$

շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$$LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8 \text{ դԲ}$$

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշտպանիչ էկրան: Ձայնամեկուսացումը $R_{Ստր}$ ըստ աղուսյակ 2 ՝ կազմում է միջնը 50 դԲ:

$LA_{տար}$ = 66,8 – 50 = 16,8 դԲ

Գլդոնի համար $LA_{տար} = LA_{էկվ} - L_{աղ} = 80 - 18,2 - 50 = 11,8$ դԲ

Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դԲ, իսկ գլդոնի 11,8 դԲ, ինչը

նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

**Թրթռում**

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապանության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, բերված են աղյուսակ 1-ում

**Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները**

**Աղյուսակ 1**

| Միջին երկրաչափական հաճախականության օկտավային շերտեր, Հց | Թույլատրելի արժեքները $X_0$, $Y_0$ և $Z_0$ առանցքներով | | | |
|---|---|---|---|---|
| | Թրթռա արագացում | | Թրթռա արագություն | |
| | **մ/վրկ$^2$ .10$^{-3}$** | **դԲ** | **մ/վ .10$^{-3}$** | **դԲ** |
| 2 | 10,0 | 80 | 0,79 | 84 |
| 4 | 11,0 | 81 | 0,45 | 79 |
| 8 | 14,0 | 83 | 0,28 | 75 |
| 16 | 28,0 | 89 | 0,28 | 75 |
| 31,5 | 56,0 | 95 | 0,28 | 75 |
| 63 | 110,0 | 101 | 0,28 | 75 |
| Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները | 10 | 80 | 0,28 | 75 |

1. Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թույլատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դԲ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:
2. Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դԲ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում ալիքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

## 11.7 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- հրդեհների առաջացման, բնական աղետների (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ և այլն) և անբարենպաստ օդերևութաբանական պայմանների փոփոխության

(քամու ուժեղացում, փոթորիկ),

- աշխատանքի ընթացքում հնարավոր վթարային իրավիճակների առաջացման,
- հեղուկ նյութերի արտահոսքի և շահագործվող շինտեխնիկայի հետ: Արատակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները կանխարգելու համար կառուցապատումը պետք է կատարել, ելնելով Արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի գնահատման ապահովման նպատակով, քաղաքաշինական բնագավառում առկա օրենսդրական գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների՝ համապատասխան պարտադիր պահանջներից: Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ազդեցությունները մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի (երկրաբան) կողմից կազմված եզրակացությունը,

- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն,

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չեն օգտագործվելու նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր

երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Արտակարգ պատահարի մասին հաշվետվության ձև

| Պատահարի ամիս/ ամսաթիվը | Պատահարի նկարագրությունը | Պատահրի վերացման միջոցառումները | Միջոցառումների ժամկետները և պատասխանատուն | Պատահրի վերացման կարգավիճակը |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- Նկուղային հարկը ծառայելու է որպես թաքստոց՝ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանական նպատակներով, նկուղն ապահովված է լինելու հակահրդեհային ավտոմատ համակարգով, սանհանգույցով, լվացարանով, ստորգետնյա հատվածում թաքստոց համար նախատեսվում է վթարային ելք,

- դպրոցի տարածքում առկա է լինելու հակահրդեհային ջրավազան, 2 հատ 100մ$^3$ տարողությամբ, իսկ շենքի ներսում տեղադրվելու է թվով 24 հատ հրշեջ ծորակ: Օդափոխության, ավտոմատ հրշեջ ազդանշանային՝ հակածխային, արտածման համակարգերով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար,

- աստիճանավանդակը, դռները լինելու են հակահրդեհային:

## 11. 8 Մարդու առողջություն, աշխատանքի կազմակերպում և անվտանգություն.

Գործունեության իրականացման ընթացքում հնարավոր են մարդու առողջությանը և աշխատանքի անվտանգությանը սպառնացող վտանգներ՝ կապված.

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քաղաքաշինական, առողջապահական, բնապահպանական և այլ նորմերի խախտման,
- թափոնների հավաքման, կուտակման, տեղափոխման,
- օգտագործվող հեղուկ նյութերի օգտագործման, պահպանման, տեղափոխման,
- արտակարգ իրավիճակների առաջացման, շինտեխնիկայի շահագործման,
- ոչ բավարար աշխատանքային պայմանների, շինարարության ընթացքում մարդու անվտանգությանը, առողջությանը սպառնացող այլ երևույթների հետ:

Շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության

ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆևԿ-3-4-80* նորմերի: Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն,

- պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003

- սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- պահպանել Առողջապահության նախարարի 28 մարտի 2017թ. «ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ» N 2.2.4-016-17 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի N 82 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 12-Ն հրամանի պահանջներ,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը՝ բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- ստուգվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրել առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև

կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնեության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողությունները՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ:

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար,

-ձյան, անձրևի, ուժեղ քամու, կայծակի դեպքում խստիվ արգելվում է շինմոնտաժային աշխատանքների կատարումը,

- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացնել 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ:

**Շահագործման փուլ.** Շահագործման փուլում դպրոցն ապահովված է լինելու հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժվելու համար անհրաժեշտ պայմաններով՝ ՀՀՇՆ 1/–11.07.01- 2006 շինարարական նորմերին համապատասխան: Մասնավորապես նախատեսվում է.

- ապահովել հաշմանդամների պահանջմունքին հարմարեցվող ունիվերսալ, շարժական տարրերով,

- հաշմանդամների համար նախատեսված սանհանգույցով,

- տարածքի մուտքը կահավորված է լինելու տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

## 11.9 Էներգախնայողություն և Էներգաարդյունավետություն.

Դպրոցի նախագծային լուծումները կատարվելու են հիմք ընդունելով ՀՀ

կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան, ներառելով՝ ջեռուցման, տաք ջրամատակարարման, օդափոխման, լուսավորության համակարգերը: էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված է և (կամ) Ձ1 ընթացակարգերի պահանջները: Համաձայն նույն որոշման IX բաժնի 31 կետի՝ շենքերը շահագործման հանձնելուց կամ շուկա հանելուց առաջ պետք է ներկայացվեն սույն կանոնակարգով սահմանված էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատման՝ «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Նույն բաժնի 34 կետում միաժամանակ նշվում է՝ էներգաարդյունավետության սերտիֆիկատը տրամադրվում է էներգետիկ փորձաքննության (աուդիտ) հիման վրա, որը ներառում է էներգաարդյունավետությունն օպտիմալ կերպով բարելավելու վերաբերյալ առաջարկություններ՝ բացառությամբ այն դեպքի, երբ գործող էներգաարդյունավետության պահանջների համեմատությամբ այդ բարելավումը նպատակահարմար չէ: Շենքերի ջեռուցման, օդափոխման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան: Նոր կառուցվող շենքի և դրանց պատող կոնստրուկցիաները նախատեսվում է կառուցել ըստ նշված կանոնակարգի(N 426-Ն որոշում) IV գլխի պահանջների՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները, սենքերում համապատասխան միկրոկլիմային ներկայացվող Հայաստանի հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերով սահմանված պահանջները:

- շենքի արտաքին պատերը երեսապատվելու են սպիտակ ֆիբրոցեմենտային սալիկներով, պահպանելով հրակայուն, ոչ ջրաթափանց և հողմաջրապաշտպան, գոլորշակայուն և գոլորշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերի նորմերը,
- կատարվելու է դեկորատիվ սալիկապատում՝ ջերմամեկուսիչ շերտի ընտրությամբ՝ օդային միջնաշերտով, ելնելով բնակավայրի ջերմային ֆոնի առանձնահատկություններից,
- շենքերի միջտարածքային ընդհանուր մուտքերն ու ելքերը լինելու են ջերմամեկուսիչ և հերմետիկ փակվող դռներով և պատուհաններով,
- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով: Շենքը ներառյալ ստորգետնյա հարկերը (նկուղ) կահավորելիս առաջնորդվելու են ՀՀ

կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,

- էլեկտրամատակարարման և ծխահեռացման փականների ավտոմատ անջատիչներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով, - ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

## 11.10 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

## 11.11 Սոցիալական.

Դպրոցի շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում առավելագույն հերթափոխում աշխատելու է 20 մարդ, որից՝ 18 բանվոր, 2-ը ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում: Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,
- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,
- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը: Նոր դպրոցի կառուցումը կապահովվի աշակերտների ուսուցման կազմակերպումն ավելի որակյալ, անվտանգ՝ բարձր սեյսմակայունություն ունեցող, բարեկարգ, նոր չափորոշիչներով կառուցված շենքում:

## 11.12 Լանդշաֆտ.

Նախատեսվող գործունեության իրականցման տարածքներում (ազդեցության

գոտում) լանշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն, կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում: Նախատեսվող դպրոցի շենքը ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն է: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

## 11.13 Բարեկարգում և Կանաչապատում

Դպրոցի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում:

Կանաչապատման պահպանման համար նախատեսվում է.

- կանաչ զանգվածի ոռոգում՝ բուսականության աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով,
- նորատունկ բուսականության, ծառերի չկպչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում: Կանաչապատման նպատակով օգտագործվող բուսահողը ձեռք է բերվելու ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ պայմանագրային հիմունքներով: Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է СНиП 2.04.02-84-ի համաձայն, այսինքն, 1մ$^2$ ոռոգման նպատակով անհրաժեշտ է 3-4լ ջուր, հետևաբար. W = (M x 4) x m Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի, m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից, հետևաբար, W = 2106*4*25= 210600 լ/ջուր կամ 210.6մ$^3$/տարի ջուր (տարվա կտրվածքով): Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է մաքրման կայանից՝ մաքրված ջրով:

# 12. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է: Գործունեության իրականացման ընթացքում

նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ: Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած համապատասխանությունները,
- խստիվ պահպանել շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի մապատասխանության ապահովվում,
- թափոնների տեղափոխման կազմակերպում՝ համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացում,
- ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորում և յուղում շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձի նշանակում, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
- բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացում, ապահովելով կանաչապատ տարածքի համապատասխանությունը կանաչապատման նախագծին,
- կանաչ զանգվածի վիճակի մշտադիտարկում, ծառերի կպչողականության ուսումնասիրություն՝ ծառերի աճն ապահովվելու նպատակով:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման

մատյանում:

## 13. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

| | Մեղմացնող միջոցառումներ | | |
|---|---|---|---|
| 1. Օդային ավազան | Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է. - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,<br>- շինհրապարակը ցանկապատված է, շենքերը ծածկել համապատասխան ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,<br>- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս են գալու մաքուր վիճակում,<br>- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,<br>- շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում, կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,<br>- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,<br>- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,<br>-ավազի շերտերի փռումը և հողի հետլիցքն իրականացնել նախապես թրջված վիճակում,<br>- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով  իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: | Կապալառու, Վերահսկող կազմակերպություն | |
| Հողային ռեսուրսներ 2. | Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.<br>-շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,<br>- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրպարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,<br>- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,<br>- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների, կամ բետոնապատ մակերեսների վրա,<br>- նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,<br>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,<br>- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավազ, կամ մանրախիճ,<br>- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն փոխարինվելու է նորով,<br>- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. | 2.1. Կապալառու, Վերահսկող կազմակերպություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | -բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: | | |
| 3. Ջրային ռեսուրսներ<br><br>Շահագործման փուլ | Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.<br>- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր:<br>- Շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,<br>- բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար: Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է . - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գոյություն ունեցող սանհանգույցից, -բիոզուգարանի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, -շինաշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է և տեղափոխվելու է կապալառու կազմակերպության կողմից Դպրոցի ջրամատակարարման համակարգերը միացվելու են բնակավայրի ջրատարին:<br>- Կոմունալ-կենցաղային հոսքաջրերի և կեղտաջրերի հեռացումը կատարվելու է տեղադրվող մաքրման կայանի միջոցով: | 3.1. Կապալառու, Վերահսկող կազմակերպություն | |
